


11347

891.99  
4-33

1871









331.99

4 - 33

43

5


Գ Ա Ղ Տ Ն Ի Ք

# Ս Ի Ր Ա Ն Ա Ր Ա Ց

Հրատարակ

Կ Ա Մ

Ա Ր Ա Ր Ա Տ Ա Ց Ա Յ Ց Ե Լ ՈՒ Ն



Վ Ի Պ Ա Ս Ա Ն ՈՒ Թ Ի Ի Ն

Հ Ա Մ Ա Ր Ձ ՈՒ Մ Ա Ց Ա . Կ Ա Ր Ե Ա Ն



Կ . Պ Օ Լ Ի Ս

Տ Պ Ա Գ Ր . Թ . Տ Ի Վ Ի Թ Ճ Ե Ա Ն

Վ Է Ջ Ի Բ Խ Ա Ն Թ Ի Ի 20.

— 1871 —


2719



2658  
39

2003





Հին Երկրագրություն



# ԳԱՂՏՆԻՔ ՍԻՐԱՀԱՐԱՅ

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

ՄԻՍՏԱՆԸ ՃԱՄԲՐՐԴՈՒԹԵԱՆ ՄԷՆ ԴԵՊՁԸ

**Երբ** վերջապէս հարկ եղաւ ելլել այն բլրէն ի վեր՝ ուրկէց ալ չէր երևար մեզ հիւրընկալող լի Հայրենական յիշատակներով քաղաքը, իմ բարեկամ Վոսանկրան ընկերս երեսներն դէպ ի Սրտէմիտ ուղղելով՝ բազուկներն պարզեց և հառաչանքով աղաղակեց, ո՛վ իմ հարցս արարիչը, Հայկայ թոռնիկներն իրենց Հայրենեաց այց ելած ատեննին միշտ այսպէս աւերակ տեսնելու են . . . . .  
և քիչ մը ատենէն՝ իր մորմարեալ օրտին յուսոյ նշոյլ մը շտեմնալով, դլուխը ծաւեց և, ո՛ր արիւնկղակ Թամուրջան ըսաւ, հողին մէջ անդամ հանդիստ չգտնաս . . . . .  
Նկատելով՝ ուր ուղեկցիս սիրտը ելած է,





Վիւուք Սրտարատայ և Բայազիտի գլուխս  
ներն ծեծելով կուգար և կըշոյէր մեր  
քրտնալի երեսներն . հոն կը տեսնուէր  
խաշնարած աղջիկներ, որ իրենց ուլերն  
առ ջենին ձգած խոտաշատ բլրակներու  
վրայ արածելու կը տանէին . չը յիշենք  
մանկական ոստոստումներն, չը յիշենք նաև  
այն անմեղ խաղերն՝ զոր Հայ պատանիք  
հորթերու և պքերներու հետ մեղ կընե-  
րկայացնէին :

Ով երջանիկ կեանք, գոչեց ընկերս  
չարձեալ, բա՛բէ, ուր էր թէ ես ալ ասոնց  
նման պարզ կեանք մը ունենայի . . . .

Իսկ ես առանց իմ ուղեկցիս բացա-  
դանչական խօսքերուն ուշ դնելու մեր  
մօտիկը երևցած մէկ ահագին խնճորենիին  
տակ կը նայէի, ուր մարդու մը ստուերը  
առանց աչքէս խուսափելու միշտ գետնին  
վրայ լիռուած կերևար :

Կամաց կամաց այս ստուերին մօտեցայ,  
տեսայ երիտասարդ մը որ կը քնանար .  
ձինչև Սրտէմիտ երթալու համար մեղի  
ուղեցոյց պէտք ըլլալուն կուզէի արթն-  
ցնել . բայց Վ. Բ. ամկրան չէր թողուր :

Թող տուր խեղճին հանգիստ քնանալու .  
մեզի երևցած դաշտին լծուարներէն մէկը  
ըլլալու է անշուշտ, կրտէր :

Բայց պառկող երիտասարդը լծուարի  
մը կերպարանքը չունէր, իբ մերկութիւնը  
ժածկելու հաղիւ բաւող ցնցոտի հան-  
դերձներն տարերկրացի ըլլալը ակներև  
կը ցուցնէին :

— Ես քեզի մտիկ ըներու ժամանակ  
չունիմ բարեկամ, ըսի, և քնացող երիտա-  
սարդին թևերէն բռնելով երկու անգամ  
վեր քաշեցի . խեղճը քունէն սթափելով,  
պարոններ, ի՞նչ կուզէք ինէ, թող տուէք  
քիչ մը հանգիստ քնանամ, միմնջեց :

— Տիրացու, եւ քիչ մը մեզի Արտէմիտի  
ճամբան ցըցուէր, ետք որչափ որ կուզես  
քնացիր . և ձեռքս դրպանս խոթելով անոր  
քանի մը դահեկտն պարզեցի :

— Ա՛հ շնորհակալ եմ պարոններ, ըսաւ  
երիտասարդը՝ հաւեճկտալով անշուշտ՝ եր-  
կինք զձեզ այս տեղ խրկեց .

— Զմեզ թերևս Աստուած խրկած ըլլաց  
հոս, բայց դու այս տեղերն ի՞նչ կընես,  
լծուար ես արդեօք :

— Լծուա՞ր, ո՛չ, ոչ, ես ալ ձեզի պէս  
օտարական մի եմ, օտարական մը, և միան-  
դամայն թշուա՛ն օտարական մը.

— Քու հասակդ ունեցող երիտասարդ-  
մը՝ ըսաւ Առամկրան, այդչափ թշուառ-  
չի կրնար ըլլալ.

— Ա՛խ, եթէ դուք զիս ճանչնայիք,  
ըսաւ լալով, անշուշտ այգպիտի յանդի-  
մանական բառեր ինձի դէմ չի պիտի դոր-  
ծածէիք, բայց մասնաւորի մը գործերուն  
անտեղեակ եղողի մը համար ներելի է . .

Արդէն մենք ալ բաւական հոգնած  
ըլլալնուս համար՝ Առամկրանի առաջար-  
կութեամբ հոն քիչ մը հանդիստ առնել  
ուղեցինք. այս երիտասարդին հոն գտնը-  
ուիլը՝ ուղեկիցս իրեն համար բազդ մը կը  
համարէր, անոր համար աւելի անոր մօ-  
տենալով, անունդ ի՛նչ է ըսաւ . . . . .


— Իմ տոհմային անունս Չնելեան է,  
իսկ անունս Չնել,

— Շատ աղէկ, պարոն Չնել, ամէն վարդ-  
իր փուշը ունի, հարկաւ դու ալ ցաւ մը  
ունենալու ես որ այս տեղերը ինկած ես.

— Յարդի պարոններ, ցա՛ւ մը ունիմ











## ԱՐԱՐՈՒՀԻՒՆ ՍԵՐԱՀԱՐԸ

Գեղեցիկ գեմք մը ամէն տեսա-  
րանէ գեղեցիկ է. իսկ Սիրուհւոյ  
մը ձայնը ամէնէն անուշ գեղ-  
գեղանքն է :

ԼԱՊՐԻԻԵՐ.

ՏԱՂԱՐ ուխտը հարիւր վաթսուն ու  
իննիւն գեկտեմբերի վերջին գիշերուան  
մէջ հազիւ թէ գլուխս բարձի դրած էի,  
երբ Մորփէն իրատուերը իմ վրաս տարածեց,  
ինքզինքս մթութեան մէջ գտայ, և այն-  
պիսի լեռնէ մը վեր կելլէի որ ինծի ան-  
ժանօթ չէր երևար. իրաւ կարծեացս մէջ  
չէի սխալած, վասնզի երբ մէկ երկու ժամու  
չափ ալ քալեցի մեր ծերունի Ս. րարատն  
ըլլալը հասկցայ :

Աչերս անգամ մը լերան բարձունք-  
ներէն իմ հայրենական աշխարհին վրայ  
երբ դարձուցի՝ սիրտս թունդ ելաւ, ամէն  
կողմ աւերակ ամէն դի վրիլկած և ամա-  
յու թիւն մը կը տիրէր. մշուշին մէջէն հազիւ

ամէնքնիդ ալ իր անդուլթ սուրին ճարակ  
կուտայ .

— Պթուլթիւն, տէր,

— Ա՛յ Անօրէն, հիմա որ իմ ձեռքիս  
մէջ ես, ինէ գթուլթիւն կը հայցես. ապա  
դուք, տկարաց որդիք, ինչո՞ւ հէք Ար-  
տու ազգայ վրայ չէք գթար, և չէք դադ-  
րեցուներ ձեր անպիտան կռաններուն  
ձայներն, այն չարագոյթ ձայներն, որ մեր  
կարիճ շանց դարաւ որ աշխատանքը ի դերև  
կը հանեն : Այսպէս ըսաւ հրէշը զայ-  
րացկոտ դէմքով մը, և իմ ոտքերէս բըռ-  
նելով չորս անգամ Մասիսի բարձանց  
վրայ բարձրացած սև սև ժայռերուն  
զարկաւ :

— Ա՛հ, գոչեցի, անիծեալ հրէշ. արիւն-  
քերան մարդասպան, Աստուծմէ չե՞ս  
երկնչիր,

— Եւ ոչ մարդիկներէն կամաչեմ. կը  
մըմուար. իմ արդար վրիժուց կայծերն  
պէտք է թափեմ այս անպիտան սեռին  
ամէն իմ ձեռքս ինկածներուն վրայ . և  
քիչ մը ետքը, — քենէ առաջ եկողներուն  
պէս ապրելու և գթուլթիւն գտնալու,

անարժան անխիղճ մարդկանց սերունդ,  
կորսուէ, ըսաւ, և զիս երկու ձեռքերուն  
մէջ առնելով նետեց խորճն փոսի մը մէջ:  
Յուսահատական ճիչ մը արձըկեցի. և, այ  
անիծեալ հրէչ՝ երկինք իմ արիւնս քենէ  
պիտի պահանջէ խոնչելով՝ շառաչիւնով մը  
փոսին մէջ քարերուն վրայ ինկայ:

Դեռ գետնին վրայ չը հասած ինծի  
անանկ կուգար թէ, ալ մեռած եմ, ապ-  
րելու յոյս չըգայ. բայց իմ կարծեացս  
բոլորովին հակառակը տեսայ. վասնզի  
փոսին մէջ իմ զգայութիւնս կորսնցու-  
նելով, չեմ գիտեր թէ ինչ եղայ կամ ինչ  
անցք անցաւ. միայն արեղակին ճառա-  
գայթներուն տաքութենէն և իմ կոտորած  
կողերուս ցաւերէն սոսկումով մը արթըն-  
նալով՝ սկսայ ասդին անդին նայիլ, բայց  
ի դուր, ամէն կողմ մեռելութիւն մը կը  
հոտէր. ոչ ընկեր, ոչ օգնական և ոչ ալ  
իմ թշուառ մայրս այն տեղ էր որ իմ ցա-  
ւերս դռնէ քիչ մը սփոփէր . . . .  
Աստուած, Աստուած իմ ինչու զիս կեն-  
դանի թողուցիր կաղաղակէի, աղէկ չէ՞ր,  
որ հոգիս առնէիր, որպէսզի աղատէի այս

8697  
39





դժոխային չարչարանքներէն . . . .

— Ատոնք դեռ քիչ են, քիչ, որոտաց ձայն մը վիհերուն խորերէն :

Այս ձայնէն զարհուրելով շուտ մը ոտքի վրայ ելլել ուղեցի, բայց անկարող էի կանգնելու, որչափ որ դաւազանիս վրայ յենլով կուզէի ոտքի վրայ ելլել, ջիղերս կըթուլնար և ոտքերս ձեռքերս քաշուելով կիյնայի կը մնայի դետնին վրայ . . . .

— Այլ ես դու, ձայնդ ահաւոր, որ ինծի տրուած պատիժը դեռ քիչ կը համարես, ըսի դողդղալով :

— Ես եմ Եուտիկ Արտաւազդայ ծառան, պատասխանեց ձայնը և բոլոր հայոց ջուրերն պղտորողը :

— Ահ, այո՛, ճանչցայ զքեզ, դու էիր որ զիս այս վիճակիս հասցուցիր Անիժեալ ոգի :

Ա՛յ, ոչ, ըսաւ ձայնը, և ինծի մօտենալով, այն քեզ պատժողը Մասեաց սարերուն պահապանն ըլլալու է, Պանկլաւիկ կըսեն անոր. շղթայեալ Արտաւազդայ սիրելի ծառաներէն մէկն է, որ իր տիրոջը վրէժը ամէն ձեռքը ինկածներէն կառնէ :

— Քաջդ Շուտիկ, դու ալ արդեօք քու այդ ըսած Պանկլաւիկիդ պէս անդ ո՞ւր ես :

— Ձէ, ես այնչափ խիստ ողի մը չեմ . բայց հիմա քեզի քանի մը հարցումներ ունիմ, եթէ շիտակը զուրցես քեզ այդ ցաւերէդ կը բժշկեմ :

— Աստուծոյ սիրոյն թող ըլլայ, պարոն Շուտիկ, առաջ զիս առողջացուր, որպէսզի կարողանամ հանդիստ շունչ առնել, յետոյ հարցուցածներուդ կը պատասխանեմ :

— Շատ աղէկ, անունդ ի՞նչ է :

— Անունս Պնել է :

— Ուրեմն, պարոն Պնել, աչերդ խփէ և սալոր մէջի շուրը խմէ :

Ծոցէն ալ կարմիր ջրով լեցուն շիշ մը հանելով ինծի տուաւ, ես ալ շուտ մը պարօն Շուտիկան ձեռքէն շիշը առնելով առանց կասկածի սկսայ խմել . վասնզի եթէ թոյն ալ ըլլար հոգս չէր, իմ ցաւերս մահը քաղցրացուցեր էին :

— Աչքդ գոցէ, աչքդ գոցէ, պարոն Պնել :

— Հիմա, հիմա ըսի, և աչքերս որչափ

ուժով կրնայի գոցելնէ գոցեցի: Շուտիկ  
ինձի անհասկանալի լեզուաւ մը աղօթքի  
պէս քիչ մը բան մրմռալէն ետև, բաց,  
ըսաւ, աչքերդ:

Աչքերս բայի, և ահա գեղեցիկ պա-  
լատի մը մէջ գտայ ես զիս, և իմ բոլոր  
ցաւերէս կատարեալ բժշկեալ մարդու  
վիճակին մէջ տեսնուեցայ:

— Օրհնեալ ըլլան այն քայլերդ, պարօն  
Շուտիկ, որ երկինք դէպ ի իս գալու ա-  
ռաջ արդեց. եթէ քեզի չիյանդիպէի,  
անշուշտ չարաչար պիտի մեռնէի:

— Իմ քեզի ըրած մարդասիրութիւնս  
այնչափ բան մը չէ, պարօն Պնել, ես միայն  
քենէ սա կը պահանջեմ, որ քու խոս-  
տումդ կատարես:

— Պատրաստ եմ պարօն Շուտիկ:

— Աւրեմն, նախ ինձի ըսէ, քեզ այս  
տեղերը ո՞վ խրկեց, և երկրորդ՝ ո՞ր երկ-  
րէն ես:

— Ես Հայաստանեաց երկրէն եմ. և իս  
մէկը այս տեղ խրկած չէ, այլ իմ ազատ  
կամքովս լեռէ լեռ ինկած եմ, ինձի շատ  
սիրելի մէկ օրիորդի մը համար:



— Անկեղծ օրէն կըսես :

— Ա. յո' :

— Կերդնո՞ւս :

— Կերդնում յանուն իմ պաշտած Աստուծոյս :

— Օրիորդի մը սէ՞րն է քեզ այս տեղերն ձգողը :

— Ա. յո' , օրիորդի մը, պարոն Ծուտիկ , օրիորդի մը, անհաւատարիմ օրիորդի մը, որ այնչափ . . . . ա'խանոր համար հոգիս անդամ կուտայի :

— Ո՞ր քաղաքէն էր :

— Եռայլուժեանց քաղաքէն :

— Անունը մի՞տքդ է :

— Ա. յո' Եռչան է :

— Եռչա՞ն :

— Ա. յո' , այո' , Եռչան :

— Քանի՞ տարեկան էայ :

— Գրեթէ տասնը եօթը :

— Է՛յ , շատ աղէկ , կը սիրե՞ս այդ աղջիկը :

— Հոգիէս ալ աւելի այդ դրուժանը :

— Ա. յն քեզ կը սիրե՞ս :

— Ատոնք աւելի հարցումներ են, որ կընես պարոն Ծուտիկ , քանի որ ես անոր

ուրացող և դրուժանաժականներն կուտամ :

— Հետաքրքրութիւնս շարժեցիր, պարոն Պնել, գեղեցիկ դէմքով է այդ քու սիրութիւնդ :

— Ա՛խ, ինձի համար մարմնեղէն հրեշտակմէ, տեսնաս անգամ մը անոր լատտերի նման փայլուն աչերը, և աղեղինման սև յօնքերը, իրաւ որ դու ալ, պարոն Եուտիկ, այս Մասեաց վիհերը ձգելով անոր կը սիրահարէիր :

Եուտիկ սկսաւ խորին կերպով մը տածել, և գրեթէ երկու ժամու չափ լուռ կենալով ասդին անդին ժուռ կ'դար, միշտ ալ մտոր բերանը դրած, արդեօք . . .  
 Թ՛յն է . . . . . Թ՛յն է . . . . .  
 ո՛չ , . . . . . ոչ . . . . .  
 չէ . . . . . միտքս . . . ինկաւ , ա՛յո . . . . .  
 Թ՛յն է . . . . . այն . . . . . վա՛յ . . . . .  
 գլխուս . . . . . արիւն ըրի կըսէր :

Ես Եուտիկան այս հատակտոր խօսուածներէն բան մը չը հասկցայ, բայց անիկա քիչ մը ատեն ալ մտածելէն ետեւ ,

— Եռայլութեանց քաղաքէն էր ըսիր , անանկ չէ՞ :

— Ս. յո :

— Պիտե՞ս արդեօք որ արուարձանէն է :

— Պիտեմ՝ բայց չեմ կրնար խօսիլ :

— Ինչո՞ւ :

— Մե՛նէ արե՛նէն չեն թողուր :

— Պէ՛թ սկզբնատառը ըսէ :

— Բենայր բա , եչ շուաք , վայ վայ կը զարնուիմ Պ. Ծուտիկ :

— Էյ շատ աղէկ , մ'ըսէր , մի զուրցեր , հասկցայ ով էնէ . բայց քեզի ես ալ շեփակը կը խօսիմ , մոռցիր այդ աղջիկը :

— Ինչո՞ւ :

Ծուտիկ քմծիծաղով մը , — մոռցի՛ր քարեկամ մոռցի՛ր . . . .

— Չեմ կրնար , պարոն Ծուտիկ :

— Քեզ սիրելու համար կրսեմ , իբրև եղբայր մը , իբրև քարեկամ մը կրսեմ , մոռցիր և . . . .

— Ահ , չեմ կրնար մոռնալ այն օրիորդը , որ հոգոյս հատորը կը համարիմ . չեմ կրնար չը յիշել այն շնորհալի արարածը , որ կենացս մէջ անկէ քաղցր բան մը չեմ ունեցած , թէ և անիկա ուրացաւ իմ սէրս , դրժեց իր ուխտը . բայց ես կը

սիրեմ, կուլամ անոր համար, և թափա-  
ռական կը շրջիմ սարէ սար, թերևս եր-  
կինք օր մը իմ վրաս գթայ և իմ սի-  
րուհիս ինծի դարձունէ :

Մնտի՛ յոյս, մրմռաց Ծուտիկ :

— Ի՞նչ, արդեօք կը ճանչնա՞ս Ծուշանս :

— Երանի թէ չը ճանչնայի :

— Կարծեմ լաւ տեղեկութիւններ ունիս  
անոր վրայ, պարոն Ծուտիկ, ինէ մի պա-  
հէր, բաղդին հարուածներէն լքեալ թըշ-  
ուառ մնեմ, քիչ մը գութ ունեցիր իմ  
վրաս, յուսակտուր գերեզման իջնալու  
մի ձգեր դիս, ըսի և սկսայ աչերէս վաղող  
արտասուքը սրբել :

— Պարապ տեղը արտասուքներդ մի  
հեղեղեր, ապերջանիկ երիտասարդ, քու  
սիրուհիդ ձեռքէդ գնաց, անիկա այժմ  
գուսան է :

— Գուսա՛ն, ըսի զարմացմամբ, և ո՞ր  
տեղ գուսան :

— Սրտաւազդայ խաղարանին մէջ :

— Ս. յգ. Ս. րչակունին խաղարա՛ն ալ ունի :

— Ս. յո՛, գեղեցիկ և փառաւոր խա-  
ղարան, հոյակապ պալատներ, վերջապէս



ինչոր պէտք է թագաւորի մը ամէնը կատարելապէս ունի :

— Եւ ի՞նչ իրաւամբ շղթայեալ վեհապետը իմ սիրուհիս Ս. րարուհի ըրած է, ըսի բարկութեամբ :

— Ս. յդ. յանցանքը իմն է, պարոն Գնել. վասնդի ես յափշտակեցի շռայլութեանց քաղաքէն Շուշանդ. իր դեղեցիութեանը համար Ս. րոտաւողդ ալ արժան դատեցանոր այդ պաշտօնը :

— Ուրեմն եթէ Շուշանիս համար մեռնիմ պարոն Շուտիկ, իմ արեանս պատասխանատուութիւնը քու վրադ կը ծանրանայ :

— Ս. տոր համար է որ քիչ մը առաջ զղջումս յայտնեցի քեզի. բայց միայն զղջմամբ դործ մը գլուխ չելլելուն համար, կը խոստանամ քեզի օգնել այն ամէն ձեռնարկութեանցդ՝ որ Շուշանը քեզի կնութեան առնելու կը վերաբերին :

Երկու ձեռքերս խաչաձև կուրծքիս վրայ դնելով՝ փրկի՛չս դոչեցի, և գլուխս վար ծռելով իբր թէ ես զիս խորին մտացմանց մէջ ընկղմեալ մէկը ձեացուցի :

— Մի մտածեր պարօն Գնել, զուրցեց  
դարձեալ մեծ փոր ողին, խոստացիր ինծի  
հնազանդելու ամէն բանի մէջ, այն ատեն  
Շուշանը քուկդ է :

— Կըխոստանամ, քաջդ Շուտիկ, եթէ  
կարող ես ինծի այդ մեծ բարեբարութիւնը  
քնել՝ ըրէ կազաչեմ, կըպաղատիմ ըսի և  
Շուտիկան առջև ծնրադրութիւն մը ընե-  
լով՝ դարձեալ սկսայ խօսքերս շարունա-  
կել, — թող Շուշանս առնելու յոյս մը  
ունենամ, ա՛հ Գրողէն անգամ չեմ եր-  
կընչիր :

— Աւրեմս, պարօն Գնել, մտիկ ըրէ  
ինծի, քեզ Արտաւազդայ ներկայութեանը  
պիտի հանեմ. դու նոր դարաւ զաւակ ըլ-  
լադդ պիտի չը յայտնես, քու ազգիդ արդէ  
վիճակը անոր չի պիտի զուրցես, Շուշանը  
քու սիրուհիդ ըլլալը պիտի չիմացնես,  
թէ չէ, գործը կըդժուարանայ, և վեր-  
ջապէս դու քեզ Արտաւազդայ սիրելի  
ընելով, ջանա՛ որ իր ցեղէն և տոհմէն  
կամ աւելի մօտիկ մէկը ըլլալ ձևացնես,  
այս առաջարկութիւնս կընդունի՛ս պարօն :

— Այո՛, պիտի աշխատիմ քու պատ-

ուերներդ պահելու, բայց եթէ սիրուհիս  
իս ճանչնայ :

— Ստիկէ երկիւղ մը մ'ունենար, ես,  
ով որ այս վիհերը բերած եմ, քեզի զուր-  
ցածիս պէս խօսած եմ անոնց ալ, Շուշան  
քեզ ճանչնալուն պէս՝ անոր կիմացնեմ  
քու հոս ըլլալդ, եթէ բերնէն բան մը  
փախցունել ուղէ, կսպառնամ անոր քաջաց  
սպարանքը խրկելու :

— Քաջաց սպարանքը ի՞նչ է, պարոն  
Շուտիկ, եթէ Շուշանս հոն պիտի խրկես  
զիս ալ խրկէ որ գէթ հոն տեսնեմ :


— Գու վեղարաւոր չես որ, քաջաց ա-  
սպարանքը երթաս, այլ եթէ տեսնել կու-  
զես, քեզ զբօսցունելու համար երբեմն  
երբեմն պարտցունելու պիտի տանիմ :

Մենք այսպէս իրարու հետ խօսած  
ատեննիս կառքերու ձայներ լսուեցան,  
և քիչ մը ետքը տասը ձիաւորներու ստուեր  
մը մեր պալատին դրանը առջևէն անցաւ.  
մեծ փոր ոգին այս երեոյթէն դողալով  
չուտ մը ոտքի ելաւ, և ահա եկա՛ն պարոն  
Գնել գոչեց :

— Որոնք են եկողներն պարոն Շուտիկ :




— Սրտաւազդ և իր օրսօրդներն, պատ-  
րաստուէ անոնց դէմ պիտի հանեմ զքեզ  
ըսաւ, և շուտ մը դրնէն դուրս ելլելով  
աներևութացաւ :





## ԱՐՔԱՐՏԱՆԵ ՈՐՄՈՐԳՆՆԵՐԸ



Շուտիկան ինձ ի խմցուցած հեղուկին  
 զօրութեամբ դացած պալատնիս փոքրիկ  
 անտառով մը զարդարեալ շատ գեղե-  
 ցիկ և ամենափառաւոր տեղմնէր . պա-  
 լատէն քիչ մը վեր երկու հատ գեղեցիկ  
 լիճեր ձեացեր էին բնութենէն, և անոնց  
 բոլորտիքը երկնանման բարձրացած ուռիի  
 և բարտիի ծառերն այս պալատին տեսքին  
 վրայ կարծես զարդ մնալ կաւելցունէին:  
 Հոն՝ ոչ ձմեռ կար և ոչ ամառ, այլ մի-  
 օրինակ գարունը կը տիրէր, և ամէն ատեն  
 դարնանային անուշղեփխուռ անպակաս էր:  
 Շուտիկ իս այս տեղ տանելէ յետոյ միտք  
 ունէր տարի մը ամբողջ պահել, որպէսզի  
 դեկտեմբերի վերջին գիշերն ինք վիճերէն  
 դուրս ելլելու ատեն՝ զիս ալ Հայրենիքս  
 դարձնէ, այլ երբ իմ սիրահարեալ ըլ-  
 լալս խմացաւ և իմ լալազին աղաղակներս

լսեց, Արտաւազդայ հետ տեսութիւնս  
անհրաժեշտ համարելով ճարմը կը մտա-  
ծէր իր նպատակին հասնելու համար,  
բազդաւոր ենք եղեր որ նոյն օրն Արա-  
րատեան քաջը որսի ելած էր :

Շուտիկան աներևութանալէն յետոյ  
երեք աղեղնաւոր մարդիկ սենեկիս դուռը  
բանալով ներս մտան, ասոնց ամենէն ա-  
ւագագոյնը որ Մելիգեբրիկ Շանօ զօրաւոր  
կըսէին, զարմացմամբ ինծի քանի մը անգամ  
նայելէն ետքը՝ իր ընկերներուն դառնա-  
լով, — Հրա՛շք կը տեսնամ, ըսաւ,

— Այո՛, անտարակոյս հրաշք ըլլալու է,  
ըսին, տկարաց որդի մը հօս ի՛նչ գործ  
ունի :

— Թերևս քաջ մը եղած ըլլայ, յարեց  
ամենէն կրտսերը :

— Այո՛, գուցէ Շուտիկան մտքին մէկ  
սատանայական ծնունդն է այս մեղի երև-  
ցող իրը, ըսին բոլորը մէկէն :

Իս՛ ալ զարհուրանքիս և վախուս  
չափը ինքնին կրնաս գուշակել, Սիսակ,  
երբ այս հրէշներն աչացս երևցան իրենց  
անճոռնի դէմքը դլխնուն վրայի երկերկու

եղջիւրներն պառաւներու նկարագրած  
Ֆէնէ - դէկէրէն չէի կրնար տարբերել . իսկ  
ոտքերնուն և ձեռաց ճանկերնուն գիրքը  
երբ տեսայ , Հնդկաց պրահմանները  
միտքս եկան . կրծոց տախտակներնուն  
վրայի զրահը՝ նախնի յունաց գիւցազանց  
զրահներուն շատ նմանութիւն ունէր , և  
գլխնուն սաղաւարտներն մեր մեծն Ար-  
տաշէսը կը յիշեցունէր , չեմ կրնար պատ-  
մել դէմքերնուն դժագրութիւնը և բե-  
րաննուն որքանութիւնը . վասնզի Աաւա-  
թեռի կամ Աալլի աշակերտութիւն ըրած  
չունիմ . բայց այսու ամենայնիւ եթէ դու  
ալ հետաքրքրութեամբ տեղեկութիւն առ-  
նել կուզես , անդիի աշխարհքը գնա՛ , հոն  
որչափ կուզես տե՛ս , որչափ կուզես անոնց  
դէմքերը՝ ձեռքը , չափէ՛ ձեռէ՛ , քեզի ար-  
դելք ըլլացող չիկայ . մանաւանդ եթէ  
վարդապետ ըլլաս , ի մօտոյ անոնց հետ  
աւելի աղէկ տեսութիւնն կրնաս ունենալ :

Աերջապէս ասոնց ասանկ զարմաց-  
մամբ կեցած ատեննին , Եուտիկ աճա-  
պարանօք սենեկիս դրնեն ներս մտաւ ,  
և Գնել պատրաստուէ . . . . .

— Օ՛ հօ՛, դուք այս տեղ ինչ կընէք Մասեաց քաջեր, ըսաւ դէպ ի անոնց դառնալով, և իրեն եզրայրութիւնը անոնց յայտնելու համար զանազան ձեւերով շարժումները ընելէն յետոյ, — կըներո՞ւ ի արդեօք ձեզ չըբարեւելուս համար :

— Բան մը չըկայ, ըսին քաջերը, երեքը մէկէն, այսօր մենք որսի պիտի ելլենք Մասիսի բարձանց վրայ, ինչպէս որ նախնի սովորութիւն մը ունինք, սիրեցեալդ Շուտիկ, դիտես առանց քեզ տեսնալու անհնար է որ քայլ մը առնենք:

— Ահ շնորհակալ եմ, իմ պատուական քաջերս, ըսաւ Շուտիկ, փորը տնկելով . այլ այսօր ձեզ շատ հետաքրքիր կըտեսնամ, աչքերնիդ ասդին անդին դարձունելով թշնամուոյ լրտեսի մը պէս իմ սենեակս կը զննէք:

— Չէ պարօն, բան մը չիգայ. միայն սա նստողին համար է նայելնիս ըսին :

Քիչ մը ետքը այս մեր դիշերաչրջիկ ողին ուսերը վեր ցցեց և ձեռքերը սիրելի մեռել մը տանող զինուորաց հրազէններուն պէս վար ծռելով, եւ Շուտիկ, կա-



ուսվար մեծին Արտաւազդայ, ձենէ պահելու բան մը չունիմ, դռչեց բարձր ձայնիւ, այս երիտասարդը որ հիմա իմ քովս կը տեսնաք մեր արքային փոքր եղբօրը Տիրանին հարազատ որդին Պանելն է, որ օրիորդի մը սիրահարելով և չըկարողանալով իր բաղձանքին հասնիլ ինքզինքն այս վիհերուն մէջ է ձգեր :

Մեր ազատորդին Պանկլաւիկ ալ այն տեղերն գտնուելով սարսափելի տանջանաց ենթարկելէն յետոյ հըրեր է Մասեաց Հիւսիսային վիհերուն մէջ. ես ալ, որ իմ առաքինական ճամբորդութենէ նոր էի դարձեր, այս թշուառ երիտասարդին հեկեկալուն ձայնը լսեցի, ձայն մը որ իմ գութս շարժեց, մօտեցայ ասոր և Մար մը կարծելով Պանկլաւիկի պատիժը քիչ է ըսի, բայց ահա կըխոստովանիմ ձեզի, տգիտութեամբ խօսեցայ, և կարծեմ թէ արքայազն Պանել իմ այս վրիպելուս կը ներէ. վասնզի արքայազունք միշտ վեհանձն կըլլան կըսեն. այսօր Արքային ճաշէն յետոյ, պիտի ներկայացունեմ անոր, և ասոր ցաւերուն ճար մը գտնալուն պիտի մտածել տամ :

— Երեք քաջերն գիշերաչրջիկին այս  
խօսքերն երբ լսեցին, ինծի գալով մեր  
քահանայներուն մաղթանք ըսած ատեն-  
ուն ըրած խոնարհութեան նման անդամ  
մը ծռեցան և բերաննուն մէջ բան մը  
լղրտացին, այլ ես բան մը չը հասկցայ :

Քիչ մը առաջ Շուտիկան ըրած խօս-  
քերէն ի՛նչ տեսակ սատանայ սաղայել  
ըլլալն հասկցայ, և ան ստախօս չրճգեղու  
համար, արդեօք իմ սիրելի հօրեղբայրս  
ո՞ւր է, ըսի :

— Ո՛վ երջանիկ երիտասարդ, ըսին,  
երեքն ալ մէկ բերան. երա՛նի քեզի, դու  
այս տեղերը շատ զուարճալի կեանք մը  
պիտի վարես :

— Ա, յո՛, երջանիկ պիտի ըլլամ եթէ  
սիրուհիս առնեմ :

— Արտաւազդայ համար աղջիկ մը քեզի  
կնութեան առնելը մեծ բան մը չէ :

— Ո՛հ ինծի համա՛ր . . . . .

— Ատոր վրայ մի մտածեր՝ Գնելդ Ար-  
քայազն, անանկ հօրեղբայր մը ունիս որ,  
ամէն բանի կարող է, թէև դորձը այս  
վիհերէն դուրս ըլլայ : Բայց կարծեմ շատ

խօսելով գլխացաւութիւն պատճառեցինք ձեր մեծապատուութեան, անոր համար ակամայ ձենէ բաժնուելու կը հարկադրուինք, ըսաւ մեծ զօրաւորը, և ձեռքը ինծի երկնցուց. — երթաք բարեաւ արի զօրաւոր, ըսի, ձեռքը թոթուելով, կաշաչեմ իս չը մոռնաք :

— Ս. յԴ մասին հոգ մնէք, մեր բարեկարեկամութիւնը անքակաելի է ըսելով դուրս ելան, ես ալ սկսայ Շուտիկան հետ խօսակցիլ :

— Ճարպիկութեանդ խօսք չունիմ, պարոն Շուտիկ, զիս այդչա՛փ, բար .

. . . . .

— Ս. յԼ պէտք է դու ալ իմ ըսածներուս համաձայնիս, արքայազնի մը վեհութիւնը զգեցիր, և նայէ որ բերնէդ խօսք չը փախցունես :

— Ս. յՈ՛, պիտի աշխատիմ քու ըսածիդ պէս ըլլալու :

— Ս. յՆ ատեն սիրուհիդ կրնաս առնել, Գնել :

— Հիմա, պարոն Շուտիկ, քու ըսած օրեղբայրս ո՛ւր է :



— Մեր պալատին դիմացի բլրին ետև  
ճաշի նստած է, իր որսորդներուն հետ .  
սրինքներու ձայն մը կը լսես :

— Ա, յո՛ :

— Ահա անոր սրնգահարաց տաւիղներ  
րուն ձայնն է, որ իր հաց կերած ատեն  
կընուագեն :

— Ե՛րբ իս անոր քով պիտի տանիս :

— Համբերէ, մէկ ժամէն կերթանք,  
դարձեալ կը պատուիրեմ քեզի, երբ անոր  
քով տանիմ, չըլլայ որ ծնրագրութիւն  
ընես, ետքը դու քեզ հասկը ցուցած կըլլաս :

— Ետտ աղէկ :

— Անոր զօրաւորներն չը յարգես իրենց  
պատիւէն աւելի :

— Գլխուս վրայ :

— Քու Գուսանդ իմ սիրուհիս է չըսես

Ա. քթային :

Եիտակ խօսք, անանկ պէտք է ընեմ :

— Քրիստոնեայ ըլլալդ ուրացիր :

— Ո՛չ, ո՛չ, չեմ կրնար :

— Ետքը սիրուհիդ ալ առնել չես կրնար :

— Գեանին տակ անցնի Եուշան, ես  
հաւանքս չեմ ուրանար :



— Եթէ չես կրնար ուրանալ, դէթ պահէ:

— Այդ ուրիշ խօսք, որչափ որ կրնամ  
իմ Քրիստոնեայ ըլլալս պիտի ծածկեմ:

Ուրեմն, օն առաջ, երթանք ըսելով՝  
ձեռքէս բռնեց և միատեղ սենեկէն դուրս  
ելանք:

Ճամբան շատ խօսքեր տեղի ունեցան  
Սիսակ, բայց քեզի ձանձրութիւն չբտալու  
համար խօսիլը զանց կառնեմ:

Մեր պալատէն մինչև դիմացնուս  
բլրին ստորոտը՝ կէս ժամու չափ կը տևէր.  
բայց մենք խօսակցութեամբ երթալնուս  
համար ճիշտ մէկ ժամէն հոն հասանք:

Արդէն երեք քաջերը Արտաւազդայ  
իմ հոն՝ Եռտիկան քով դանուխս իմա-  
ցուցեր էին. հազիւ թէ մենք բլրին վրայէն  
վար իջնալու սկսեր էինք իմ կարծեցեալ  
հօրեղբայրս բաղուկներն պարզելով մեծ  
ուռիի ծառին տակ եկաւ, և զիս գրկեց,  
— ո՛հ իմ սիրուն եղբօրորդիս բարի,  
բարի եկար ըսելով, երեսներս կը համ-  
բուրէր: Ես լուռ կեցած, ինչպէս պա-  
տասխանելս կը մտածէի այս թագապսակ

անձին, մինչդեռ Արտաւազդ ինծի հարցումներ կրնէր :

— Ի՞նչպէս եղաւ որ հոս եկար, իմ արի զաւակս, ի՞նչ, միթէ հայրս՝ այն թագաւոր կոչուելու անգամ անարժան անձը, քե՞զ ալ անիծեց :

— Իմ արի հօրեղբայրս, քու հայրդ իր որդիէն զատ ուրիշ մը անիծած չունի, իմ այս տեղ դալուս պատճառը օրիորդի մը սիրահարեը է, ա՛հ. անոր համար մա՛հ տալ կուզեմ այս ցաւալի անձիս :

— Թշուա՛ռ երիտասարդ, հայրդ անկարօ՞ղ էր կնութեան առնել քեզի այն օրիորդը, որոյ համար դու քեզ լեռներն ես ձգեր :

Արդարեւ քիչ մնաց որ, բերնէս պիտի փախցունէի իմ հօրս քսան տարի առաջ մեռնելն, բայց ետքը միտքս եկաւ որ ես 1869 Պնելլը չեմ, այլ ասկէ 1727 տարի առաջ Հայոց վրայ թագաւորող Արշակունի Տիրանին որդին Պնելն իմ, անոր համար շուտ մը, — իմ հայրս ատանկ բաներու չիխառնուիր, ըսի :

— Եթէ Տիրան չէ ուզեր կամ չուզեր

խառնուիլ այդ քու ամուսնական խընդ-  
րոյդ, ես իմ Գնելս չեմ կրնար անմխիթար  
դերեղման իջեցունել :

Ես իմ հօրեղբօրս այս խոստումը լսած  
ատենս կարծես աշխարհք ինձի տուին ,  
և ուրախութենէս խելքս գլխէս թռչելով՝  
ինչ ընելս չիգիտցայ, միայն սա գիտեմ  
որ, Արտաւազդայ առջև ծնրադրեցի .  
Սիսակ, տեսնայիր անգամ մը Շուտիկան  
այս ժամանակի երեսներուն կարմրու-  
թիւնը , իր առաջին պատուէրը ասանկ  
առտան կոխելս իրեն քիչ պզտիկութիւն չէր,  
անոր համար վազելով եկաւ քովս և ձեռ-  
քէս բռնելով վեր վերցուց, և դառնալով  
քաջին ալ ըսաւ , — Մեր ազատորդին  
Պանկլաւիկ՝ չըճանչնալով այս վեհազն ե-  
րիտասարդը, շատ չարչարեր է , անոր  
համար ոտքի վրայ չիկրնար կայնիլ , և  
դադառնալ մնալ իմ ականջէս ի վար՝ խոստ-  
մանդ դէմ մեղանչեցիր, թշուառական  
տղայ, բայց ինչ և իցէ նայէ որ անձգ-  
ղսպես , այս անգամ պատրուակաւ մը  
կասկածի տեղի չըտուինք :

Ես ձայն չըհանեցի, տրամութենէս



Երեսներս չեմ գիտեր ինչ գոյն տուին ,  
իսկ Ա. րտաւազդ , միւս ձեռքէս բռնելով ,  
— ոչ երբէք կուզեմ ծնկուններուն խո-  
նարհիլը իմ եղբօրորդիս Պնելին , և խօսքը  
առ իս ուղղելով , — Պնել , դու իմ գրկացս  
մէջ մեծցած ես , ինչո՞ւ համար այդչափ  
աղաչաւոր բնութիւն մը ունիս . ինչո՞ւ ,  
միթէ՛ դու գիւցազանց որդի չե՞ս , միթէ՛  
դու այն մեր զարհուրելի պատերազմնե-  
րուն ատենը , չըճնա՞ր . ա՛հ , չես յիշեր  
քու հօրեղբայրդ Ա. րտաւազդը , որ անգամ  
մը իր անգութ թուրը հոլած ատեն՝ հա-  
րիւրաւոր Հռոմայեցոց գլուխներն թուրի  
պէս դետին կըթափէր : Ա, յո՛ , Պնել , քու  
մանկական օրերուդ մէջ էր , երբ իմ հայրս  
Ա. րեմտեանց դէմ պատերազմ հրատա-  
րակեց . ամէն Հայու արիւն կրող քաջեր  
գունդագունդ մեր Վ. իշապագլուխ դրո-  
շակին տակ ժողուեցան , և այնպիսի պա-  
տերազմներ մղեցինք որ Եւրոպացիք զար-  
հուրելով Ա. րմենիոյ անունը լսել չէին  
ուզեր . մտիկ ըրէ Պնել , քու հետդ խօ-  
սողը արի Ա. ՐՏԱ. Ի. Ա. ՁԴՆ է :

Երբ Երասխ դետին եղբրքը Շարու-



բայի դաշտին վրայ օտար լեզուներու ստուերը երևցաւ, ոչ Ալան մօրս աղա-  
 շանաց և ոչ իմ քերցս արտասուացը նա-  
 յեցայ, այլ սուր ի ձեռին մտայ թշնամոյն  
 բանակին մէջ իմ հատընտիր կտրիճներովս,  
 և այնպիսի ջարդ տուի որ լեզուաւ չեմ  
 կրնար նկարագրել, այնուհետև . . .  
 ինչ որ ալ եղաւ ես զիս չըպարծենցու-  
 նելու համար չեմ գրուցեր :

Այսպէս կը խօսէր տարաբաղդ թա-  
 գաւորը, ինքզինքը Արտաշատայ մէջ կտր-  
 ծելով, իր ձայնը կը նմանէր առիւծի ձայնի  
 և այս խօսքերը զրուցած ատեն լերան վրայի  
 քարերը կը դղրդէին, չըսեմ իր խօսած  
 լեզուին քաղցրութիւնը, որուն բոլոր բա-  
 ուերն ալ հին Հայերէն էին, դիտեմ, եթէ  
 իմ սիրելի մայրս իսկարդալ սորուելու  
 չըլսրկէր, անոր խօսուածքէն բառ մը  
 անգամ չիպիտի կըրնայի հասկնալ. այն  
 ատեն շատ շուարեալ ըլլալուս համար,  
 անոր խօսած շատ մը Հայկական հին բա-  
 ուերն և լեզուային ոճերն միտքս չըմնացին  
 որ ես ալ քեզի խօսէի՝ Սիսակ, թերևս  
 Հայ բանասէրք ալ քենէ սորուելով ծա-

նօթութիւն մը ստանային մեր նախնեաց խօսակցութեան վրայ. սաչափ դիտեմ որ մեր ծերունի պատմիչին (Խորէնացիին) մեղի աւանդած քանի մը հատակտոր շէրերուն շատ նմանութիւն ունէր, թէև ալևոր պատմաբանին զանոնք կոկած ըլլալն ալ նշմարեցի :

Հիմա ձգենք այս տեսակ խնդիրները և դառնանք քաջին հետ մեր խօսակցութեանը :

Քաջը իր խօսքերը վերջացուցեր և մեծ ծառերուն տակ ճեմելու սկսեր էր, անդիէն Մելիգներիկ վազելով եկաւ, և, Վեհափառ տէր, ըսաւ, այծերու երամակ մը մեր կեցած տեղէն մէկ մղոն հեռու պաղ ջրերու առուններուն վրայ կարածին, եթէ կը հաճիք պատրաստել տամ ձիերն :

— Շատ աղէկ, բայց պէտք է նախ Շուտիկան պալատն երթալ :

Մելիգներիկ մենէ քիչ մը հեռանալով, Արտաւազդայ ձգած զինուորներուն քով դնաց և քառորդէ մը դարձաւ :

— Կարծեմ կառքերն պատրաստեցիք պարոն զօրաւար :

— Այո :

— Ուրեմն, ելի՛ր Պնեւ, ըսաւ Հօրեղբայրս, և զիս առաւ տարաւ իր փառաւոր կառքին մէջ, ուր ամենահանգիստ կերպով բաղմելով խօսակցութեան սկսանք: Օրունոյն խելքը միտքը Արտաշատն էր Հայ . . . էր, ես ալ չըխայտառակուելու համար իր ամէն հարցուցածներուն շինծու և կեղծ խօսքերով կըպատասխանէի :

Միսակ՝ եթէ դու ալ 1727 տարիներուն վրայէն քայլ մը առնել կուզես ասանկ ընելու ես :

Ամենէն վերջը յարեց քաջը, — իմ այս վայրերը դալէս յետոյ, իմ Արմենեայ կինս ինձ եղաւ, և արտասուալի դէմքով մը, ո՛հ արդեօք դեռ կա՞սրի ամուսինս ըսաւ :

— Շատ ու շատ ցաւալի է անոր վիճակը վեհափառ տէր, ըսի քիչ մնալ աչքէս բռնի արտասունք հանելով, այն որբ և այրի մնէ, խեղճ ու թշուառ, քեզ կորսնցունելու դժբաղդութիւնն ունենալէն յետոյ՝ թէև բաւական ատեն հանգիստ կեանք անցուց, բայց վերջը ամենագառն վիճակ մը ունեցաւ, իր որդւոց շատերն զինքն ուրացան



չատերն ալ միայնակ ձգելով հեռացան  
 իրմէ. օտարք ալ ոտքի տակ առին զայն,  
 և դեռ իմ զինքը ձգած ատենս, անոր  
 խեղճ հոգին անգամ, անունն անգամ,  
 աշխարհիս վրայէն վերցունելու կաշխա-  
 տէին. ա՛խ իմ սիրելի հօրեղբայրս, դիտեսս  
 թէ ես ալ անոր համար որչափ արիւնէ  
 արտասունք թափած եմ, բայց արտա-  
 սունքը, աշխարելը, պօռալ կանչե՛լը այն  
 թշուառին ցաւերուն դարման մը չեն կըր-  
 նար ըլլալ. ո՛հ այն Արմենեան, քու չքնաղ  
 Արմենեադ, երբ ամէն օր իր աչքին  
 առջև իր թոռնիկներուն ճղակտոր ելլելը  
 կըտեսնէ, դազանակերպ մարդիկներէ, օրը  
 տասը անգամ դերեղման իջնալու չափ  
 կըլլայ :

Արտաւաղդայ վրայ կատաղութեան  
 նշաններ երևցան, և այնպիսի որոտագին  
 ձայն մը ձգեց որ, բոլոր Մասեաց վիհերն  
 դղրդելու սկսան. ո՛հ ճշմարիտ, ճշմարիտ  
 կըսես Պնել, ըսաւ, և իր երկու ձեռ-  
 քերովը ամրապինտ կառքին դրան փիղ-  
 կերն բռնելով քաշեց վրցուց և ջարդ ու  
 բուրդ ընելով նետեց դետնին վրայ :



— Դու, Հայրդ և բոլոր Արշակունիք՝  
միթէ այն տեղ չէ՞ք, ա՛հ . . . . .

Ես ալ, անպարտ տեղը այս զայրացեալ անձէն չըպատժուելու համար, —  
Մասիսու քաջ, ըսի. Արմենեադ Եդեմային երջանկութիւններ ալ վայելած է որ ետքը պիտի պատմեմ:

— Ի՞նչ, արդեօք հանգստութեան երես տեսած ունի՞ . . . . .

— Այո, այո, եթէ քիչ մը հանգստանամ, անշուշտ քեզի՝ քու Արմենեայիդ պատմութիւնը պիտի խօսիմ:

Մենք այսպէս մերթ հանդարտ և մերթ կրակոտ խօսած ըլլալնուս չը կրցանք Շուտիկան պալատը անցնելնիս նշմարել, որսորդք ալ Արտաւազդայ բարկութենէն վախնալով չէին իմացուցեր. բայց քիչ մը ետքը Մելիգերիկ զօրաւարը Քաջին հանդարտութենէն համարձակութիւն առած՝ եկաւ հօրեղբօրս կառքին առջև ծնրադրութիւն ընելով, — քաջ թագաւոր, ըսաւ, կառաւարը իր պարտքը կատարելու մոռցաւ, մենք Շուտիկան պալատը անցանք,

և դեռ դուք ձեր կամքը մեզի չըյայտ-  
նեցիք :

— Հող չէ զօրա՛ւար, արդէն այսօր որսի՛  
ելլելու ակորթակս անցաւ , ըսէ կա-  
ռաւարին թող Ս,րևելեան ճամբան ձրդէ  
մեր կառքը ըսաւ :


Հագիւ թէ քաջին հրամանը բերնէն  
ելած էր, կառքերնիս պտոյտով մը դէպ է  
Հարաւային Ս,րևելեան կողմը դառնալը  
տեսայ :

— Ա՛հ, ո՛ւր կերթանք :

— Մեր պալատը՝ մրմռաց ծերունին :



ԱՐՏԱՆԱԶԳԻՆՆԵՑ ՊԱԼԱՏԸ



Հայկազն քաջին պալատը երթալու համար, պէտք է մէկ նեղ անձաւէ մը ներս մտնալ, զգուշութեան համար այս քարայրին բերանը միակտուր ահագին քար մը դրուած էր, եթէ այս կափարչին վրայ, Սիսակ, լաւ դաղափար մը առնել կուզես, Ա . Պօլտոյ դիմացը ծովուն մէջ շինուած աշտարակը միտքդ բեր, որ առանց սուտ խօսելու կրնամ ըսել թէ ատոր չափ կար :

Երբ մենք այս տեղ հասանք մեր ծերունի Ա. քիւլէսը կառքին մէջէն ցաթկելով՝ այս բլրածև ժայռը բռնելուն պէս քսան կանգուն հեռու տեղ մը նետեց :

Նա մինչդեռ Հսկային այս ահագին ժայռը ձմերուկի մը պէս վերցունելն ու նետելը տեսայ, կայնած տեղէս ետ ետ երթալով՝ Երկինք կարողութիւն տուց Մասեաց քաջին գոչեցի :

— Հապա՛ զաւակս, եթէ դու ալ դիւ-  
ցաղն մը ըլլալ կուզես, այսպէս պէտք է  
ընել, ըսաւ քաջը, և սկսաւ քալել, ես ալ  
անոր հետևեցայ և տասը որսորդք ալ  
իրենց ձիերէն վար իջնալով, սանձերն  
ձեռքերնին առած մեր ետևէն եկան .  
նեղ ու դարովար ճանապարհէ մը վար  
սկսանք իջնալ, որ տասը վայրկեանի  
չափ ալ երթալէն յետոյ, հօրեղբայրս եր-  
կաթէ դրան մը առջևը կայնեցաւ . այս  
դրան գլուխը Հայ տառերով « ԴՈՒՌՆ  
ՊԱԼԱՏԻՆ ԱՐՏՍԱԻԱԶԴԱՅ » գրուած էր .  
հետաքրքրու թեամբ հօրեղբօրս հարցուցի :

— Դուք երբ այս տեղ եկաք, գեռ մեր  
գիրերը չէր հնարուած, չեմ գիտեր  
ինչպէս կարողացաք գիտնալ և գրել :

— Ո՞վ գտած է Հայոց գիրերն, ըսաւ  
քմծիծաղով մը :

— Մեսրոպ անուն մարդ մը :

— Մեսրոպ անունով մարդ մը, ըսաւ  
զարմացմամբ, ուրքերն ալ ուժգին գետ-  
նին զարնելով միամիտ զնել, քեզ ատանկ  
համոզեր են . . . . .

— Համոզել ի՞նչ ըսել է, ահա բոլոր  
պատմագիրք կը վկայեն :



— Էյ շատ աղէկ, այդ գիրքերն ո՞ւր գտնուեր են :

— Ես ինչ գիտեմ, քանի մը հասար Աշտիշատայ մէջ կըսեն, իսկ Վարդան Բալուխ\* լերան վրայի բերդին մէջ գտնուեցաւ կըսէ :

— Շատ լաւ, ա՛յդչափ իմաստո՞ւնն մարդէր այդ Մեսրոպը :

— Ինք այնչափ գիտուն մը չէ եղեր :

---

\* 1864ին Բալուխի մէջ եղած ատեննիս այս հրոշակաւոր բերդը տեսնելու գացինք, Տեղացիք անանկ աւանդութիւն մը ունին թէ՛ այս բերդին մէջ է գտնուեր Հայ գիրքըր, անոր համար բերդին Ս. Մեսրոպայ բերդ կըսեն, և այն տեղ կանգնուած մէկ ահագին քարի մը մասնաւոր յարգութիւն մը կուտան, չէ թէ միայն Հայք այլ թիւրքերն անգամ այց ելած ատեննին, Մեսրուրին քարին (այսպէս կանուանեն այլազգիք) մէկ մէկ մոմ ընծայ տանելն ալ չեն մոռնար : Մնապաշտ մարդիկ՝ մանաւանդ կանայք, իրենց խնդիրքը ընդունուելը գիտնալու համար մանր խիճեր այս քարին վրայ պրճուած տեղերուն կը փակցունեն, եթէ խիճը քարին փակչի, մեծապէս կուրախանան, վասնզի իրենց խնդիրքը ընդունուած և կատարուած ըլլալուն կանխիկ գուշակութիւն մը կը համարին, իսկ եթէ չի փակչի, մեր ընթերցողներն ինքնին անոնց տրամուծեան չափը կրնան երեւկայել :

Քայց Սասուն . . . . շատ մը աղա-  
չելով՝ աներևոյթ ձեռք մը տեսաւ կըսեն,  
որ քարի մը վրայ Հայոց երեսուն և չորս  
գիրերն կը դժէր, ինք ալ անկէց ուսա-  
նելով Հայոց ձեռքը եզոզ գրեանք սկսաւ  
այսնոր գիրերուն վերածել :

— Կեցցէ՛ Մեսրոպ, ուրիշ ի՞նչ սու-  
տերու շարոց ունիս քովդ, Գնել :

— Գու իմ ամէն խօսքերս կը հեղնես,  
ըսի խնդալով, ըյս աշխարհի մէջ եղած  
բաներն քեզի պիտի չըխօսիմ :

— Սա վերջին հարցումիս ալ պատաս-  
խան է, քեզի աւելի ձանձրութիւն չի պիտի  
տամ :

— Աղէկ :

— Սրդեօք քանի տարի առաջ գտնը-  
ուած են այդ գիրերն :

Ես ալ ժամանակական սխալով ծու-  
ղակը չկնալու համար, իմ հօրս Տիրանին  
Թագաւորութեան չորրորդ տարին ըսի,  
որ ըսել է քան երեք տարի առաջ :

— Խեղճ աղայ, ըսաւ հօրեղբայրս,  
ձեռքը ուսիս վրայ դնելով, Հայ գիրերն  
արդէն Հայկազանց ժամանակէն ի վեր

կային, և մեր նախնիք օրէ օր կոկելով  
բաւական ձևի բերած էին. բայց յերայ  
մեր նախորդներէն մէկ քանին օտարա-  
մոլութեամբ ձգեցին մեր տառերն, ու  
սկսան յոյն, ասորի և պարսիկ գիրերն  
դործածել, որ գէշ բան մնէր. ես աս  
բանին չէի հաւնէր, անոր համար շատե-  
րուն աչքէն ելայ: Մեր ազգը փոխանակ  
օտարայ պատրաստած բաներուն տիրա-  
նալու, թող ջանայ ինք իրեն տէր ըլլալու,  
և աշխատի ինքդինքը սկզբնական Ազգի մը  
վայելուչ վիճակի մէջ դնելու: Օտարի գի-  
րերէն փոխ առնե՛լ, Յունաց և Հռոմա-  
յեցւոց աստուածներուն յարգանք տա՛լ  
և իրեն սեփհականե՛լ . . . . .

Ինչ մեղքս պահեմ, Պնել այս ետ-  
քիններուն մէկ բնական թշնամի մը եղած  
էի. բայց փառք կուտամ Ոսկեմօրն, որ  
Հայք ուշաբերելով ձգեր են օտարամո-  
լութիւնը, և իրենց հին գիրերուն նոր ձև  
տալով սկսեր են դործածել:

Այս տեսակ խօսքերն դոցելու համար  
— իմ քաջ հօրեղբայրս, ըսի, իրաւ որ ալ  
ոտքերուս վրայ կենալու կարողութիւն  
չունիմ:



Ս,յն ատեն՝ Մասեաց ծերունին երեսներն գէպի դուռն ուղղելով, ինծի անհասկանալի երկու բառ արտասանեց :

Անզգայ երկաթը չեմ գիտեր ինչ զօրութենէ շարժեալ՝ շառաչունով մը բացուեցաւ :

Ս,բառազգէ մէկ ոտքով անոր սեմին վրայ կոխելով,

— Ս,յս իմ պալատիս պարտեզն է, Գնեւ, կը հաւնիս, հօրս Ս,բառաշատայ պարտեզէն գեղեցիկ չէ՞ :

— Անկէ շատ փառաւոր և միանգամայն անկէ ալ զուարճալի է քու պարտեզդ, իմ քաջ Հօրեղբայրս, միայն բան մը կը թլակսի այս տեղ, այն է աղատութիւնը, որ ինչպէս դու՝ նոյնպէս ալ ես ամէն բանէ վեր կը համարիմ :

Ս,բառազգէ երբ աղատութեան հրապուրիչ անունը լսեց, խղճալի գէմքով գլուխը ուսին վրայ ծռելով, իմ սիրելի Գնեւս բառ, ես շատ աշխատեցայ այդ ցանկալի թագուհւոյն համար, բայց . . .  
. . . անիծեալ ըլլայ Ս,բառաշէս որ զիս այս կապանքներուն մատնեց :



— Յոյսը քու հոգիէդ չը պակասի, քաջդ  
Ս. րարատեան, թերևս երկինք օր մը դժայ  
իր ասու ապեալ զաւկին վրայ :

Ս. րոտաազգ՝ այլ ևս ձայն չը հանեց,  
և տխուր դէմքով պարտեղին ցանկերուն  
քովէն սկսանք քալել. երբ քաջերուն  
շինած մէկ խուղին քով հասանք՝ հօրեղ-  
բայրս մատուներն ծումուկելով բերնին մէջ  
խօթեց և սուլեց, Ինչպէս որ սչխարք  
իրենց հովուին արնդին ձայնը լսելով  
գունդազունդ անոր քով կը թողուին,  
այնպէս էր ողիներուն սովորութիւնն ալ,  
վասնզի հազիւ Ս. րոտաազգայ սուլելուն  
ձայնը լսուեր էր, ահա անդիէն ութը հատ  
յաւերժահարսունք եկան, և երեք հեղ  
խոնարհելով հօրեղ բօրս հրամանացը կըս-  
պասէին. իսկ քաջը երկրորդ անգամ  
սուլեց, այս հեղ ծառերուն տակէն զօրա-  
ւարի համազգեատ հազնող չորս կտրիճ-  
ներ իր ամէն հրամանացը հնազանդելու  
պատրաստ՝ մեր դէմը կայնեցան. — քակ-  
ուին այս շղթաներն, գոչեց բարձրաձայն  
դարաւոր ծերունին. շառաչիւնով մը ոտ-  
քերուն երկաթներն քակուեցան. — Սնի-

ծեա՛լ ըլլայ Արտաշէս . . . այս անար-  
ժան զէնքը իմ դէմ գործածելուն համար:

Այսչափ խօսակցութիւնք ակնթարթի  
արագութեամբ եղան, և այնուհետև ըս-  
կըսանք ծերունւոյն հետ ճեմել այն ամե-  
նախառու որ պարտիզին մէջ: Պարտէզը  
չատ գեղեցիկ ծառերով և տեսակ տե-  
սակ հոտաւետ ծաղիկներով զարդարեալ  
գրախտ մնէր. իր մէջ գտնուած թռչուն-  
ներուն քաղցրաձայնութիւնը մարդս կըզ-  
մայլեցունէին:

Պարտիզին Հարաւային կողմը կա-  
ռուցուած էր այն գեղեցիկ պալատը որ  
գարերով Արտաւազգայ բնակարանն եղած  
էր: Պալատէն քիչ մը հեռու շինուած էր  
ահագին կռասուռն մը, ուր Ռսկէմօր ար-  
ձանք կանգուն կերեար: Սիսակ՝ եթէ  
դու ալ ասոնք տեսնել կուզես, գիտեմ,  
քաղձանացդ չի պիտի կրնաս հասնիլ,  
վասնզի երկու մարդ միակերպ երազ չեն  
կրնար տեսնել. բայց քեզ գոհ ընելու  
համար պիտի աշխատիմ ինչպէս որ տեսայ,  
նոյնպէս նկարագրելու, թէ և աղէկ գիտեմ  
որ չէ թէ ինձի պէս տկար մը՝ այլ եթէ

Բազրատունին ալ գայ, չեմ կարծեր որ  
կարողանայ այս փառաւոր պաշատին՝  
պարտէզին և կուստան նկարագրութիւնն  
անթերի ընել : Մուցայ ըսելու որ մեր  
այս պարտիզին Ս. րեմտեան կողմը կը գըտ-  
նուէր ամենափառաւոր թատրոն մը որ  
Մասեաց քաջը ԽԱՂԱՐՄ.Ն ԱՐՇԱԿՈՒ-  
ՆԵԱՆ անունը կուտար, որ մենք քիչ  
մը ետքը այն տեղ տեսնելու պիտի երթանք :

Խաղարանը շինուած էր բարձր շերան  
մը վրայ և երկու դռներով գեղեցիկ շէնք  
մը ունէր, շատ անդամ ասոր արեւմտեան  
դրան քով նստած գէպ ի այն վտակը կը  
նայէի որ մեր Երասխին շատ նմանութիւն  
ունէր :

Այս տեղերն ինծի այնչափ գեղեցիկ  
երևցան որ, անկէ ելլելուս համար զըղ-  
ջացած եմ. թող ամէն օր արգելանոցի  
մէջ դանուիմ, թող ամէն ատեն հարիւ-  
րաւոր օրեր քնացած մնամ, միայն անդամ  
մ'ալ տեսնամ Ս. րարատայ այս զուար-  
ճալի պարտէզը, այն պարտէզը՝ որ ոչ  
Յունաստանի և ոչ Իտալիոյ պայծառ եր-



կիրներուն մէջ կրնաս գտնաւ :

. . . . .  
. . . . .

Ուր փայլումէ արեգը՝  
իր կուտական շողերով,  
ուր ջրումէ երկինքը՝  
երկերն զով ցողերով,  
ուր որ չկայ բրեւի,  
չկայ շիմուն ու խորչակ,  
օդը շունչ է հրեշտակի,  
ջուրը մեղր է անուշակ\* :

. . . . .  
. . . . .

Միտակ երբ Արտաւազդայ գեղեցիկ  
դարաստը տեսայ, երբ անոր զմայլելի  
պարտէզին մէջ ոտք կոխեցի, երբ Ոսկե-  
մօրն այն ահագին արձանը աչքիս դպաւ,  
զարմանք մը սրատեց դիւ, և շատ ցաւեցայ  
ասանկ տեղեր տեսնելէ զուրկ մնալուս  
համար. — թշուառ է այն մարդը, քաջ-  
Մասեաց ըսի, որ այսպէս գեղեցիկ տեղեր  
չէ տեսեր: Իսկ ծերունին խորին հառաւ:

---

\* Ռ. Տ. Գ. ՊԱՏԿԱՆԵԱՆՆԵ



չանքով մը, աւանդ իմ կենացս ըսաւ, Պնել,  
լաւ էր որ ազատ գլուխովս աւերակաց  
բու մը ըլլամ, քան շղթայեալ թագաւոր  
մը. իմ հօրս անէծքը որչափ որ ազդեցու-  
թիւն մը չըներ այս պալատիս մէջ, բայց .  
. . . . . ա՛հ չեմ կարող ցանկալի  
ազատութիւնս վայելել իմ տոհմային աշ-  
խարհին մէջ, ազատութիւնս սահմանա-  
փակ է, Պնել, սամեծ փոր ոգին կըտես-  
նաս, թէ և ինծի ամէն տեսակ ծառայու-  
թիւն կընէ, թէ և ամէն հրամանացս կը  
հնազանդի՝ բայց չիձգեր որ կոտորեմ  
սա անագորոյն անուրը՝ որ այս գեղա-  
ղուարճ պարտէզէն դուրս ելլելէս յետոյ՝  
կենդանի էակի մը պէս կուգայ և կը պըլ-  
լուի ոտքերուս և զիս կըշղթայէ, անիծեա՛լ,  
ո՛հ անիծեա՛լ ըլլայ Ս. Բատաշէս . . . . .

— Աիրքով կըխօսիք իմ քաջ հօրեղբայրս:

— Ի՛նչ կիրքով կըխօսիմ, եթէ դու  
իմ տեղս ըլլայիր, արդեօք չիպիտի անի-  
ծէիր այն օրն որ մայրդ քեզ ծնաւ, այն  
օրն կըսեմ, սք հայրդ դուրդուրալով  
աշխարհիս վրայ որդի մը ունեցայ ըսաւ,  
և քու այդ գլուխդ քարէ քար չիպիտի

զարնէիր, ազատութեանդ համար, վա՛յ, վա՛յ ինձ Պնեւ, իրաւ շատ աստերջանիկ արարած մնեմ այս աշխարհիս վրայ. այս գեղեցիկ պալատը՝ պարտէզը ինձի ոչինչ կերևան, Ոսկէմօրն պատգամներն անդամ վաղանցիկ երազներ կը թուին, աւելի գէշ վիճակ մը պիտի ունենայի եթէ իմ խաղարանս շինեւ չըտայի, իմ դժբախտ գըլխուս ամփօնք՝ այս շէնքը եղած է միայն. այսօր մեր պալատը չի գացած հոն պիտի տանիմ քեզ, որպէսզի դու ալ քաշած վիշտերդ մոռնալով զուարճանաս :

— Ես ալ, վեհափառ տէր, ըսի խղճալի դէմքով մը, քու հրաւերդ սիրով պիտի ընդունէի եթէ չարաչար հոգնած չըլլայի, կաղաչեմ եթէ կը հաճիս առաջ հանգրստանալուս համար տեղ մը որոշէիր, կամ խրկէիր, ինչու որ քիչ մը քնանալ կուզեմ :

— Ս.յդչա՞մի շատ հոգնած ես, Պնեւ :

— Ս.յո՛, կարծեմ բաւական ճամբայ քալեցի, և եթէ Պանկլաւիկի դէպքն ալ կը յիշէք, ինձի քիչ անհանդուտութիւն չէր :

— Ս.յո՛, իրա՛ւ իրա՛ւ, պէտք է առաջ մեր պալատը երթանք, և դառնալով Պ.

զօրաւար, ըսաւ Մելիոներիկի, դնա՛, դե-  
րասանապետին ըսէ, որ այս գիշերուան  
ներկայացումը վաղուան ձգէ :

Մելիոներիկ Շանօ հեռացաւ մենէ  
և հօրեղբայրս ալ ինծի դառնալով մեր  
պալատը երթալ կուզես անանկ չէ՞, ըսաւ :

— Դուք դիտէք :

— Շատ հեռու տեղ մը չէ, տասն վայր-  
կեան հազիւ կը քշէ. ահա կերուայ, բայց  
կուզեմ որ Արտաշատայ մէջ պատահած  
դէպքերն մի առ մի ինծի պատմես, ինչու  
որ ես իմ Հայրենիքս շատ կը սիրեմ, եթէ  
դիտցած ըլլաս անոր համար թափած ար-  
տասունքներս . . . . .

Այսպէս ըսաւ Արտաւազդ, և քիչ  
մ'ալ քալելէն յետոյ, սկսաւ պալատին  
դրան մարմարիոնէ սանդուխներէն վեր  
ելլել, ես ալ որսորդներուն հետ վեր ելայ,  
հազիւ թէ դրնէն ներս կը մանայինք, երկու  
յաւերժահարսունք եկան և քաջին թևեր  
րէն մտներով, տարին իր սենեակը :

Արտաւազդ ինէ չը բաժնուած —  
մօտս եկու Գնեւս, ըսաւ, քենէ չը բաժ-  
նուած այդ Արշակունւոյ վեհ ճակատդ



համբուրեմ անդամ մը :

Խնդում երեսով հօրեղբօրս մօտե-  
նալով, իմ քաջ հօրեղբայրս ըսի, շատ  
ատեն բաժանեալ պիտի մնա՞նք :

— Չէ, Գնեւ, քու հանգստութիւնդ  
դանալէն յետոյ, քովս պիտի կանչեմ,  
ըսաւ, և նկարեալ դռնէ մը ներս մտնելով  
աներևութացաւ :

Ես ալ բոլորս ակնարկ մը նետելով  
իմ երթալու ճանբաս բնտուելու ատեն,  
արքայորդիդ Գնեւ, ըսաւ վեշտասանամեայ  
յաւերժահարս մը, դէմիս վարագոյրին  
տակէն ելլելով, հրամայեցէք որ կա-  
տարեմ :

— Սիրուն արարած բարձրելոյն, ես ո՞ւր  
պիտի երթամ :

— Քեզի համար պատրաստուած սե-  
նեակը՝ ըսաւ, յաւերժահարսը կոտորու-  
ուելով, որ մեծ Արտաւազդայ հրա-  
մանաւ զարդարած ենք :

— Ուրեմն երթանք :

— Ա, յո՛, երթանք, բայց ո՛հ այդ ինչ  
դեղեցիկ դէմք է, աղնուականի մը դէմքը  
կը կրես վրադ, իմ սիրելի Գնեւ :



— Իմ հետ մտերմաբար կըխօսիս լուսեղէն արարած . . . . .

— Ի՞նչ, միթէ դուք կատէք յաւերժահարսունք :

Ս.յս խօսքերն զըուցած ատեն, կուսին վրայ դողդողալու նշաններ երեւցան, և կարմրութիւնը տիրեց անոր երեսին :

— Աչ երբէք կատեմ կոյսերը, կըսիրեմ զանոնք իբրև իմ քոյրերս, ըսի, և կուսին ձեռքէն բռնելով, Շուտիկուհի՛ արի՛, իմ սենեակս ինձի ցըցուր. վասնզի ոտքերուս վրայ կայնելու, կարողութիւն չունիմ :

— Ձէ, չէ Նրխաասարդ քաջազարմ, պէտք է ինձի խօսք տալ խօսք, ո՛հ չե՞ս սիրեր իս, Գնել :

— Արսիրեմ իբրև քոյր մը թերևս, ըսի գլուխս երեւցունելով :

— Ս.յդ քոյր բառը հանէ խօսակցութեանդ մէջէն. իբրև նշանած մը իս չես սիրեր, ա՛հ կը մեռնիմ . . . . . պատասխա՛ն մը :

— Շուտիկուհի ինձի մտիկ ըրէ, ևս իբրև նշանած մը գքեզ չեմ կրնար սիրել, և չեմ սիրեր, աշխարհիս վրայ և Սատու-

ծոյ արևին տակ մէկ, և միայն մէկ սիրուհի  
մը՝ մէկ նշանած մը ունիմ, բաբէ՛, եթէ  
կարողանամ զայն դանալ, իմ բոլոր բաղ-  
ձանացս և երջանկութեան հասած կը  
համարիմ ես զիս. լիովնէ կարծիքդ իմ  
վրայէս, ճշմարիտ սիրահար մը չը կրնար  
ուրիշին յարիլ, թէ և իրեն դէմ ելլողը՝  
երկնքի և երկրի մէջ չը գտնուող, չքնաղ  
յաւերթահարս մը ըլլայ: Ա.յո՛, սիրուն ես  
դու, գեղեցիկ ես դու, այլ քու անունդ  
Շուշան չէ. չքնաղ օրիորդ մնես, բայց  
դու իմ սիրտս կրծող որդը չես. իմ նա-  
ղելիս չես, քեզի նման գեղեցիկ չը կայ՝  
աշխարհիս վրայ, բայց ես իմ սէրս չեմ՝  
ծախեր, ո՛ր Շուտիկուհի. դնա՛, հեռացիր,  
և քեզի համար ուրիշ մը բնտուէ. ես Շու-  
շանը սիրեցի, և մինչև գերեզմանիս դուռը  
զայն պիտի սիրեմ:

Տրտմալի դէմքով մը յաւերթահարսը,  
քայլ առ քայլ հեռացաւ:

Ես ալ տեսնալով որ առանց ուղե-  
ցոյցի մնացի, նաղելի օրիորդ գոչեցի, մեծին  
Արտաւազդայ հրամանը առ ոտն կը կոխեմ:

Խօսքիս կէսը դեռ բերանս էր երբ

յանկարծ անուշ նուադարաններու տա-  
ւիղներու և քնարներու ձայներով իմ կե-  
ցած սրահս լեցուեցաւ, և ձայն մը որ կը  
դռչէր, յաղթանակե՛ց յաղթանակե՛ց . .  
. . . լոյս աշխարհի երիտասարդը :

Բոլորս նայեցայ և ահա հարիւրաւոր  
ողիններու բաղմութիւն մը իմ կեցած  
տեղս լցուեր էին, և ապրի Պնել . . .  
յաղթանակե՛ց . . . . խօսքերը կը լսէի :  
Ս. յսչափ ամբօխին մէջէն հաղիւ կարու-  
ղացայ տեսնել իմ բարերար Շուտիկս  
որ ինծի քաղցր աչօք մը նայելէն յետոյ,  
եկաւ ձեռքէս բռնեց և իմ վրայ ունեցած  
իր համակրութիւնը զանազան խօսքերով  
և ձևերով ինծի հասկըցուց. ապա Մեղի-  
ուերիկը՝ ուրախութեամբ մը քովս եկաւ  
և տեսակ տեսակ ծաղիկներով շինուած  
պսակ մը գլխուս դնելով, ո՛ր երիտասարդ-  
հայազգի ըսաւ, այս պսակը քեզ սիրելնուս  
թող նշանը համարուի. դու այնպիսի մեծ  
յաղթութիւն մը կատարեցիր, որ . . . .  
դու սիրուհի մը ունիս եղեր, մենք բոլոր  
քաջքս պիտի աշխատինք, քեզ քու հրեշ-  
տակիդ հասցունելու, բայց քեզի կուզեմ՝



քանի մը խօսք ընել, կը հաւանի՞ս արդեօք լսելու քեզի բարեկամ եղողի մը խրատներուն :

— Միշտ բարեկամ եմ քեզի արի զօրաւար :

— Պարօն Գնել, ըսաւ խնդում երեսով, դու մեծ յաղթութիւն մը կատարեցիր, այո՛, այն կուսին հրապուրիչ խօսքերէն չը խաբուելով առաջուր կոխեցիր անոր չքնաղ դէմքին գեղեցկութիւնը՝ քու սէրդ անարատ պահելով, բարեկամ մտիկ ըրէ, դու այս վիհերուն մէջ բաւական ատեն պիտի կենաս և խել մը փորձող սատանաներու մաղերէն պիտի անցնիս. երջանիկ պիտի ըլլաս եթէ դու միշտ այսպէս ճակատաբաց դուրս ելլես :

Ես Մելիգեղիկի գովեստներն և խրատխոյսը լսելու ատեն, առանց ձայն հանելու, առանց շարժում մը ընելու կայներ էի. և Մասեաց քաջերու գունդը բոլորտիքս շարուած, կարծես իբրև իրենց սըրտերուն սիրելին իրենց կրծոցը վրայ զիս սիամել կուղէին. այլ վերջապէս զօրաւարը



տեսնելով որ միշտ անհանդստութեան մէջ եմ,

— Դու շատ հողեամ ըլլալու ես, պարօն Գնել:

— Պանկլաւիկ ըսուած հրէշը թող ամբշնայ, այն իս շատ չարչարեց:

— Սիրելիս, անոր պարտքն է Մասեաց սահմաններուն հսկելը, այդ բանին համար կը յուսամ որ ներումն կը շնորհես. իսկ քեզի համար գեղեցիկ սենեակ մը պատրաստած ենք, ուր ամէն տեսակ հանգրտութիւն պիտի վայելես, և դառնալով իր զինուորներուն — փութով մեր արքայազն հիւրը իր սենեակը տարէք ըսաւ:

Իր զինուորներէն երկու անձինք և մէկ յաւերժահարս մը եկան իս առին տարին մէկ գեղեցիկ սենեակ մը, ուր շատ ժամանակ Ս. րտաւազդ իր օրերն անցուցած էր:


Սենեակը գովելու և նկարագրելու համար լեզու պէտք է որ խօսի, հանճար պէտք է որ նկարագրէ. ոչ բնութիւնը և ոչ արհեստը կարող է այսպէս շնորհք տալ և զարդարել Ս. ստուծոյ ստեղծած այս այլասեռ նիւթերը:

Ես այս դեղեցիկ սենեակը մտնելուս  
պէս, մէկ մեծ ու մաքուր անկողին մը տեսայ,  
որ սենեակին արևելեան կողմը նայող  
պատուհաններուն առջին շտկուած էր :

Վազեղով մը շիտակ անկողնոյն վրայ  
ցաթկեցի, և առանց լաթերս հանելու  
ինկայ մէջը պառկեցայ ածապարանօք .  
մինչև անգամ զինուորաց և յաւերժա-  
հարսին գիշեր բարի ըտելնին անգամ լսել  
չուղեցի, ինչու որ այնչափ հոգներս և  
անբուն մնալս ինձի ձանձրալի երևցուցին  
անոնց խօսքերն :



ՅՈՒՆԻԱՐԻ ԵՒ ՅՈՒՏԻԿ Ի ՊԱՐՏԻՉԻՆ



Յունվարի առաջին դիշերն էր երբ քնացայ, բայց որչափ ժամանակ անցաւ՝ այն իմ մտային կարողութենէս դուրս է գիտնալը, սա միայն դիտեմ որ անօթութենէս արթննալով անդամ մը աչքերս ասդին անդին դարձուցի, իմ ուր ըլլալուս վրայ մտածելով. սակայն շատ տարակուսեալ կերևայի. որովհետև պառկած ատենէս ի վեր քունէս գլուխ վերցուցած չունէի որ, ուր տեղ ըլլալս միտքս մնար :

Որչափ ապուշ ես եղեր Քնել, ըսի ես ինձի, և շուտ մը անկողինէս դուրս ելլելով, դրան դուրսը սպասող կուսէն, քիչ մը ջուր ուզեցի. կոյսը իմ հրամանս կատարեց. ես ալ առնելով դուրս ելայ և աչքերս բերանս աղէկ մը լուալէն յետոյ ներս եկայ, ինձի համար պատրաստուած կերակուրը ճաշելու համար : Չը կրցայ

հասկնալ թէ, արդեօք Հօրեղբայրս այսչափ  
անուշահամ կերակուր որի եփել կուտար.  
անուշութենէն իրաւ որ առանց Հայրմերը  
ըսելու քիչ մնաց որ մատուներս ալ հետը  
պիտի ուտէի. սա ալ չեմ գիտեր թէ կե-  
րակրոց անուշութենէն, թէ չէ՝ իմ անօ-  
թութենէս էր, որ այսչափ ակարծակով  
լափելէս յետոյ ուրիշ ալ կա՞յ, ըսի կուսին:  
— Ս, յո՛, որչափ որ կուզես. ետին ալ դառ-  
նալով՝ քթին տակէն այս մարդը Շարային  
ցեղէն ըլլալու է ըսաւ: Ես ատանկ ոչինչ  
խօսքերը մտիկ չընելով, ինչ կուզէ նէ  
թող ըսէ, ըսի, միայն ինձի կերակուր թող  
բերէ: Այոք զնաց և քառորդէ մը ետ  
դարձաւ, ձեռքը լի համադամ կերակուր-  
ներով՝ անօնք ալ կերայ առանց ձայն հա-  
նելու:

— Ուրի՛շ ալ կայ տանտիկին, ուրի՛շ . .

— Ստուած կշտացունէ աս մարդը,  
ըսաւ խեղճ յաւերժահարսը, — և գուրս  
եղաւ, ետ չդառնալու պայմանաւ. ես ալ  
ի հարկէ տախտակ սեղանին վրայէն ելայ  
և իմ ասկողնոյս վրայ նստեցայ պատու-  
հանէն Ս, բուաւազդայ պարտէզը գիտելու



համար, որ ինձի շատ զուարճալի կերևար:  
Սիսակ, ես Սուլթանին արուեստիւ զար-  
դարեալ պարտէզներն շատ պտրտած եմ,  
հիմայ քեզի առանց սուտ խօսելու կրնամ  
ըսել թէ իմ տեսածներուս և ոչ մէկը  
Սրարատայ քաջին պարտիզին գեղեցկու-  
թեանը կրնայ հաւասարիլ . հասցա անոր  
մէջ գտնուած շնաշխարհիկ կոյսէ՛րը . .

Աերջապէս երբ անկողնոյս վրայ նըս-  
տած անգամ մը ակնարկ մը նետեցի բո-  
լորտիքս ա՛հ, ինչ կը տեսնաս . . . . .  
առաւօտեան Արեգին կենսատու ճառա-  
գայթներն զարկած էին այս գեղազուարճ  
բուրաստանին վրայ, և մանանայի նման  
գիշերային ցողերը կաթիլ կաթիլ պրտ-  
զատու ծառերուն տերևներէն վար կը  
թափէին. վայրի ուլեր իրենց մարց ետին  
ինկած, այնպէս աղւոր մայելու ձայն մը  
կը հանէին, որ ես զիս իմ Հայրենեացս  
դաշտերուն մէջ կը գիտնայի . . . . .  
Պակնճոր միտքէս չես ելլեր . . . . .

Թշուառ պանդուխտ, հեռո՛ւ ես  
հեռո՛ւ Հայրենիքէդ . . . . .  
որ մէկը ըսեմ, ասդին մշտադալար ծա-

ուեր, անդին գեղափետուր թռչուններ, ուրիշ տեղ յաւերժահարսանց զմայլելի գեղեցկութիւնը, որ իբրև առաւօտեան բւերներ կը ճեմէին պարտիզին մէջ. հիմայ որ այս խնձորենիին տակ նստած ասոնք միտքս կը բերեմ, ապաշաւ մը կուդայ հոգւոյս խորերէն անկէ ելլելու համար, և մեր նախնեաց պէս կը դռչեմ, «Ո՞ տայր ինձ . . . . զառաւօտն նաւասարդի»:

Թշուառ վտարանդի, մի՛ մի՛ յիշելո՛ւ այնպիսի բաներ՝ որ քեզի զուարճութիւն կը սպառճառեն, արդէն դու օտարութեան ալէկոծեալ ծովուն մէջ խեղդուելու վիճակին մէջ կը դանուխ. ո՞ւր է Հայրենիքդ, ո՞ւր է հայրդ —, ո՛հ դեռ ծիծ կերած ատենս սպաննուած էր լեռնային քրդերէ. — ո՞ւր է մայրդ — ա՛հ իմ այրի մայրս. . .

Հարցումիս պատասխանէ թշուառ երիտասարդ, ո՞ւր են քու սիրելիներդ, — ո՞ւր են քու քոյրերդ, — մի՛ մի՛ հարցուներ, և իմ սիրտս արիւնով մի լեցուներ, ո՛ սէրդ Հայրենական. ա՛հ, անոնք մեռան իմ բացակայութեանս ատեն, դային ի-

րենց պաշտած արարչին՝ իրեններուն համար պատրաստած տեղը . իս աւելի թըշուառացունելու համար իմ սիրելեացս յիշատակներն մի զարթուցաներ, թշուառմանս . . . թշուառ . . . . և ինչո՞ւ  
— բոլոր արդի Հայոց կեանքը քեզի կը հասկցունէ :

Այսպէս ես իմ մարդէս յուզուելու ատեն, սալորենիի ծառերուն տակէն մէկ մը երևաց, որ քիչ մնալ դէպ ի իմ նստած սենեկիս կողմը դալով մարդագեղեցիներուն վրայ Արարացոց ձեռով նստեցաւ . այս անձը իմ բարեկամ Շուաիկն էր, որ իր ձեռքի երկայն հոսելին քովի քարացի\* ծառին կը թնցունելով, սկսաւ քաջին նոր տնկել տուած վարդի ծառերուն նայիլ . իր ձեռքի հոսելին տեսնելով համոզուեցայ որ հեռու տեղէ մը կուգայ, ապիկայ սովորութիւն մնէ, մինչեւ անգամ Հայ երկրագործներն երբ հեռու տեղ մը երթան .

---

\* Բարացի՝ ծառ մնէ, որ իր գարծրութեանը համար կարծեմ հայաստանցիք այդ անուանը արժանացուցեր են :



դաւաղանի տեղ հոսելին միշտ ձեռքերնին կառնեն :

Շուտիկ նստելէն յետոյ քանի մը անգամ փռնքտաց, և քանի մը անգամ ալ իս յիշելէն յետոյ, ձայնը կորեց. ես ալ չքլայ որ մեծ փորը իս տեանէ ըսելով ելայ նստած սենեկիս վանդակներն վարառի, և անիկայ դիտելու համար առանց ձայն մը հանելու պատուհանին տակ շարուած բարձերէն մէկուն վրայ նստեցայ : Այսպէս մէկ քառորդի մը չափ լուռ ու մունջ կենալէն յետոյ, յանկարծ ձեռքերնին ծաղկէ փունջեր բռնած չորս յաւերժահարսունք տեսայ, որ ծառերուն մէջէն ելլելով յուշիկ յուշիկ Շուտիկան ըով եկան և կանամբէ շինուած աթոռակներուն վրայ նստեցան : Այս գեղեցիկ արարածներն արդէն ես կը ճանչնայի. եթէ դու ալ Միսակ տեղեկանալ կուզես, ահա մէկիկ մէկիկ քեզի պիտի ցուցնեմ :

Ասոնց առաջինը քաջին կոմերը մրտնեկով անոր սենեակը տանող կոյսն է. իր խոշոր աչերը, միջակ հասակը իս տարակուսանքի մէջ չըձգեցին . Արտաւազդ-



ասոր Գուգուլ գշխոյ անունը կուտար .  
շխտակը խօսելով Հայ թագաւորը անիկայ  
հեղինակու համար, Հայ լեզուին մէջ ասկէ  
աւելի յարմար բառ մը չէր կրնար գտնալ :

Երկրորդը նոյնպէս իմ ծանօթներէս  
էր, Սևերես կրտսին այս յաւերժահարսին  
որ ինձի կերակուր բերաւ, և իր ինչ բարի  
ծաղիկ ըլլալը ցուցնելու համար, ինձի նոր  
Շարայ անունը տուաւ, թէ և գիտեմ որ  
ինք ինչ աւելի կը ճըղկի, երբ սեղանի մը  
վրայ պատրաստ կերակուրներ գտնայ :

Երրորդը զիս փորձող Եւտիկուհին  
էր, գետնին տակը անցնի, քիչ մնաց որ  
դլխուս փորձանք մը պիտի հանէի ասոր  
պատճառաւ :

Բայց չորրորդը, ո՛հ այն ալ կը ճանչ-  
նամ, իմ Եուշանս է անիկայ, որուն հա-  
մար Մասեաց վիհերուն մէջ բաւական  
չարչարուեցայ, և դեռ . . . . .

Ա՛հ անիկայ տեսնելուս պէս ոտքի  
ելայ, և քիչ մնաց որ դուռէն դուրս ել-  
լելով՝ երթայի անոնց քով . այլ ոտքի ելած  
ժամանակս իմ սենեակիս մէջ շարուած  
բարձերէն մէկուն վրայ գեղեցիկ գիտակ

մը տեսայ . այս դիտակը Ս. րոտաւազդ շատ  
ժամանակ դորժածած էր . մէկէն իմ Շու-  
չանս ձեռքէս աղատելիք չունի դուչեցի  
ինդալով՝ և սենեակին մէջ սատոստելով .  
ահա Ոսկեմայրն ինծի պէտք եղած ամեն  
բաներն յանակնկալս կը հասցունէ , այսպէս  
ըսելով բարձին վրայէն դիտակը առի , և  
վանդակին ծակերուն մէջէն կռթնցունե-  
լով սկսայ դիտել իմ մեծ փոր բարեկամս  
և իր չքնազ ընկերներն :

Միասկ , այս խօսքերը քեզի խօսելու  
չափ հազիւ ժամանակ անցեր էր , տեսայ  
որ Շուտիկ իր սովորական բարեմազթու-  
թիւններն ընելէն յետոյ — հիմայ ձեզ  
ինչո՞ւ համար այս առանձին տեղը բերած  
եմ՝ դիտէ՞ք , ըսաւ :

— Ո՛չ , պատասխանեցին կոյսերը :

— Խօսքս քեզի է , յարեց Շուտիկ , ան-  
նըման Շուչան , քեզի խօսելիք ունիմ ,  
կը հաճիս արդեօք քեզի բարեկամ՝ եղողի  
մը քանի մը խօսքերը լսել :

Երբոր Շուտիկ , Շուչան անունը ար-  
տասանեց , շղային ցնցում մը զգացի , և  
քիչ մնաց որ , պատուհանէն վար ցաթ-

կելով, երթայի պըլլուէի Սիրուհւոյս ստ-  
քերուն և աղաչէի պաղատէի՝ որպէս զի  
հաճէր ինձի նշանած ըլլալու . բայց յան-  
կարծ այն պատկերհանը միտքս ինկաւ, որ  
մարդու մը պատկերին յօնքերը շինած  
ատեն խեղճին աչքերն ալ հաներ է, անոր  
համար ձայն չըհանելով միշտ կուլայի,  
բառ մը անգամ բերնէս չելաւ :

— Սիրուն օրիորդ, շարունակեց Շու-  
տիկ՝ հոսելին քարացիին տակէն առնելով,  
անցած տարի ես քեզ Շռայլութեանց  
քաղաքէն յափշտակեցի միտքդ կուգա՞յ :

— Ս, յո՛, կը յիշեմ ինձի ըրած այդ մեծ  
բարերարութիւնդ, այն դարչն լի քաղաքէն  
իս ազատելով՝ այս փառաւոր տեղերը  
բերիբ, ուր հանգիստ կեանք կըլարեմ,  
ինչպէս գիտես՝ մեծդ Շուտիկ, այն տեղ  
շապիկ և չըգիտեմ ինչ կարելով՝ աչքե-  
րուս լոյսը կը թափէի . այո՛, քեզի շատ  
շնորհակալ եմ, ինչու որ իմ կեանքս քեզի  
կըսարտիմ, ըսաւ Շուշան, շըջազգեստին  
քղանցքն ալ ժողուելով :

— Չէ՛, օրիորդ, իմ քեզի ըրած կար-  
ծեցեալ բարերարութիւնս բան մը չէ .



եթէ դիտցած ըլլայի, որ քու ետևէդ լացող մը կայ, իրաւ որ այդ բարերարութիւնը չի պիտի բնէի :

Շուշան մէկէն ի մէկ սարսուաց, և արհամարհոտ դէմքով մը, — ի՞նչ ըսել կուզես, մեծ կառավար :

— Կրտսեմ թէ, չի պիտի . . . . .

— Ինչո՞ւ,

— Շիտակը պիտի խօսիս օրիորդ, դու Գնեւ անուամբ մարդ մը կը ճանչնաս :

Սատանայ աղջիկը առանց իր խօսքը մոլորցունելու :

— Ս, յո՛ւ, պարոն Շուտիկ, իմ մեռած հօրս հարսին մօրը քրոջը տղուն անունը Գնեւ էր :

— Ուրի՞շ,

— Իմ դրացին ճալղրօս տուտուին տղուն անունը Գնեւ էր :

— Ուրի՞շ, ըսաւ Շուտիկը հոսելին քանի մը անգամ երերցունելով :

— Մեր ժամկոչին եղբօրը անունը Գրնեւ էր :

Թշուառական դրուժանք իս ամենեւին միտքը չէր բերեր :



— Չէ չէ, այդ Պնեւններն չեմ հարցուներ  
քեզի, ըսաւ Եուտիկ դարձեալ, դու  
աւելի հին Պնեւ մը ճանչնալու ես :

— Ա, յո՛, միտքս եկաւ դպրոց դացած  
Ժամանակս, վարժապետս ինձի Աղղային  
պատմութեան մէջ Պնեւ անունով իշխան  
մնալ բերնէն կը յեղ յեղէր :

— Ուրիշ, Պնեւ անունով ամենեւին  
մէկը չես ճանչնար :

— Ոչ՛ պատասխանեց Եուշան :

Ա, յա խօսքը երբ Եուշանին բերնէն  
ելաւ, ինչ սուտ խօսիմ կրակ կտրեցայ .

— Ա՛խ, ուր էր թէ կըսէի, հիմայ ձեռքս  
դաշոյն մը կամ շասքօ ըլլար, երթայի սա  
ուրացողին, սա դրուժանին միտը շան կե-  
րակուր ընէի. չես ճանչնար Պնեւ անունով  
մէկը անանկ չէ՞ ուրացող, առ քեզի կըր  
դնտակ մը. չես ճանչնար դրուժան՝ առ  
սրաիդ դաշոյն մը . . . . .

Ահա այսպէս կը մտածէի Սիւակ .  
բաւական ատեն ալ ատանկ խոժողադէմ  
կենալէն յետոյ, աչքերս անդամ մ'ալ  
դէպ ի այն ուրացողը դարձուցի և կատաղի  
կերպարանքով նստած բարձիւս վրայ ինկայ .

և շա՛տ արտասուեցի . . . . .

Բայց դէշ կը խորհիս Պնեւ, յիշէ մօրդայն փափուկ խօսքերն, որ քեզ խրատած ատեն կըսէր, «զաւակս ներկային համար ապագադ վտանգի մէջ մի՛ ձգեր. չէ՛ ես թէև ամէն կիններն կատեմ, այլ մայրս կը սիրեմ, և կը խոնարհիմ անոր խօսքերուն. չէ չէ վրէժ չի պիտի պահանջեմ Եուշանէն թող ուրանայ, թող չի ճանչնայ իս, ես ապագային մէջ անոր՝ իրեն ծանօթ Պնեւ մ'ալ ըլլալը պիտի ցուցունեմ. ա՛հ սրտովս կը գոչեմ, թող ապրի Սիրուհիս ..

Քիչ մնալ այսպէս հառաչելէս յետոյ, անոնց խօսքերը լսելու համար դարձեալ դըլուխս վեր վերցուցի, և տեսայ որ Եուտիկ միշտ կը թախանձէր յաւերժահարսը:

— Դու ուրիշ Պնեւ մ'ալ կը ճանչնաս Օրիորդ կըսէր, ինէ պահել չըլլար:

— Խաչ վկայ, մաս վկայ, պարոն Եուտիկ, ուրիշ Պնեւ անունով մարդ մը չե՛մ ճանչնար:

— Բու դըլխուդ փորձանք մը կըլլամ Եուշան, շիտակ խօսէ. իսկ միւս յաւերժահարսունք մատերնին բերաննին դրած,

խոր մտածմանց մէջ ընկղմեր էին, միայն  
Պուգուլը երբեմն զարհուրելի կերպա-  
րանքով մեծ փոր Շուտիկան կը նայեր և  
երբեմն Շուշանին. դիտակս շիտակ ուղ-  
ղեցի Պուգուլին, տեսայ որ Տիգրանա-  
կերտի սեխերուն պէս երեսներն դեղներ  
էին, իմ բարեկամ՝ Շուտիկա ալ միշտ և  
անընդհատ իր հարցումներն կը շարու-  
նակէր :

— Քեզ քաջաց ապարանքը կը խրկեմ,  
և կայրէ կարասին մէջ խօթել կուտամ  
Շուշան, խոստովանէ :

— Ես սուտ չեմ խօսիր քաջդ Շուտիկ,  
կերդնում որ ուրիշ Գնել չեմ ճանչնար :

— Սուտ են՝ սուտ քու երդումներդ  
Շուշան, որոտաց Շուտիկ, քանի որ դու  
ինէ կը պահես՝ ես քեզի ըսեմ, ուրեմն  
Գնելեան Գնելը չե՞ս ճանչնար անօրէն :

Շուշան կայծակէ զարնուածի պէս,  
վայ դոչեց և մէկէն ի մէկ աթուռին վրայէն  
երեսի վրայ գետին ինկաւ, և սկսաւ դըլ-  
խուն մազերը փեթթել :

— Աւրացող, դրուժան կըսէր Շուտիկ,  
չես ճանչնար այն երխտասարդը որ այնչափ



խաբեր ես, դու անօրէն՝ դու շատ և շատ  
տանջանքներու արժանի մէկն ես. բայց  
ի՞նչ ըսեմ կին ես դու հեռի՛ ինէ . . .  
. . . հեռի՛ :

Շուշանին ընկերներն Շուտիկան բար-  
կութիւնը տեսնելով, շուտ մը նստած տե-  
ղերնէն ելլելով դացին բարեկամիս ձեռ-  
քէն բռնեցին և — ներէ.քաջդ Շուտիկ յա-  
ւերժահարս մը ծեծելը աղէկ բան մը չէ,  
կին մը, օրիորդ մը ապտակելը անոր շար-  
ճամբաներու առաջնորդել ըսել է :

— Թող տուէք որ սատկեցունեմ ստեր-  
դումը. տիեզերաց բոլորը շրջող Շուտիկը  
խաբել կըլլա՞յ շխաի, կըսէր մեծ փորը  
բարկութեամբ :

— Ներէ.քաջդ Շուտիկ, կըսէին յաւեր-  
ժահարսունք, յիշէ մեր բարեկամական  
սէրը :

Վերջապէս իրենց քնքուշ ձեռքերով,  
և հրեշտակային լեզուաւը, դիւթեցին իմ  
բարեկամս, և անիկայ իր տեղը նստե-  
ցուցին :

— Յաւերժահարսո՛ւնք, ըսաւ Շուտիկ,  
խաթունն վրայ նստելով, սուտ խօսելը մեր



գնդին ամենէն մեծ մէկ աչքաբացու  
թիւնն է, անով է որ մենք շատ մարդիկ  
կըխարենք, այլ մենք մեզի պէտք չէ որ  
սուտ խօսինք, որովհետև կարծեմ դուք  
ալ գիտէք որ իրարու սուտով բան հա-  
կըցընել անհնար է:

— Ս. յո', անանկ է, ըսին յաւերժահար-  
տունք, բայց Շուշան շատ կ'ատէ այն երի-  
տասարդը, որուն համար իրեն հետ խօ-  
սեցաք. կը յուսանք որ անոր սուտ երդում  
ընելուն, կամ քեզ խաբելուն համար բա-  
ւոր սրտով կը ներէք:

— Կը ներեմ եթէ զիս ապահովցնէք  
անգամ մ'ալ այս տեսակ յանցանքի մէջ  
չիյնալու:

— Ս. յո', մենք կ'երաշխաւորենք ըսին,  
և Շուշանս դետնին վրայէն վերցունելով,  
բերին Շուտիկան ձեռքը համբուրել տուին.  
տսիկա իրենց հաշտութեան առաջին պայ-  
մանն է եղեր:

— Արդ ինձի նայէ Շուշան, կը ներեմ  
քեզի, եթէ անգամ մ'ալ սուտ երդում  
չընես, և զրուցես Գնելէն հեռանալու գ-  
պատճառը բռաւ Շուտիկ:

— Այն . . . Մեծդ Եռտիկ, ես դեռ հաղիւ տատուերկու տարեկան կայի երբ այս բանը իմ գլխուս եկաւ, կըսէր Եռշան երկու ձեռքերը Եռտիկան ուսերուն վրայ դնելով . այո՛, այն երխտասարդը հոգին կուտար ինծի համար և թէև ես ալ առաջ զինք կըսիրէի, այլ ետքը զղջացի, վասնզի աղքատ էր, թշուառ էր . չե՞ս գիտեր որ ոսկին սատանաներէն աւելի գործ կը տեսնէ աշխարհիս վրայ . գտիւր երխտասարդ մը որ կարողութիւնն չունի, ըսել կուզեմ ստակ չունի, և որ կուզէ ինծի նման մէկը առնել . չե՞ որ ես կուզեմ իմ ժամանակաւոր գեղութեանս պատճառաւ հարուստի մը հետ ամուսնանալ :

— Մտիկ ըրէ, օրիորդ, ըսաւ Եռտիկ փորը անկելով, և բերանն ալ կարելի եղածին չտի բանալով, ես քիչ մը առաջ քու թշնամիդ էի, բայց հիմա ականջ դիւ խօսքերուս՝ իբրև բարեկամի մը խօսքերուն, մարդ մը աշխարհիս վրայ երջանիկ ընողը ոչ գեղեցկութիւնն է և ոչ հարբատութիւնը, այլ սէրը, այն ճշմարիտ սէրը, այն մտերմութիւնն ու հաւատարմութիւնը



Եւջանն ու Եւջանիկ ի պարտիզին .

ԳԼ 4





որուն մէջ միայն՝ վշտացեալ մարդ մը  
 իրեն սփոփանքը կարող է գտնել. Շուշան,  
 ես քեզ յափշտակած և հոս բերած ատենս  
 մոռցայ քեզի ցուցնել այն երջանիկ ըն-  
 տանիքներն որ Հայաստանի շատ նահանգ-  
 ներուն մէջ կը բնակին. երբոր երբեմն  
 երբեմն պտըտելու կեղնեմ՝ այն տեղերն՝  
 իրաւ որ կ'սքանչանամ և կը հրճուիմ.  
 որովհետև կը տեսնեմ որ Սասունած երջան-  
 կութիւնը կատարելապէս և ձրի միայն գիւ-  
 ղացւոց բաժնած է. երջանկութիւնը այն-  
 պիսի քաղցր և խոնարհ բնութիւն մ'ունի,  
 որ պալատներու մէջ մուտ չկրնար գտնել.  
 այո՛, կը տեսնէի որ գիւղացին, մինչև ի-  
 րիկուն խաղաղ ու հանդարտ իր երկիրը  
 հերկելէն յետոյ, երեկոյն կը քակէր հոգ-  
 նած եղներն իրենց սամիններէն, և իր մա-  
 սուսան ուսին գրած երգերով և խնդա-  
 լով տուն կը դառնար, տուն՝ ուր ուրա-  
 խութիւնը իր ժպիտը կը ցուցնէր, և ուր  
 գործունեայ և քնքուշ և սակաւապէտ կին  
 մը կը դրկախառնէր զինքը և իրեն վայե-  
 լուչ մեծարանքը կը նծայէր :

Գիտեմ պիտի ըսես թէ հապա այն

չարչարանքներն . . . որոյ ենթակայ են  
խեղճ դիւղացիք, այն աւարառութիւն-  
ներն . . . այն սպանութիւններն . . .

հապա այն կուսապղծութիւններն . . . .  
ա՛հ դժոխքէն ու տարտարոսէն ալ գէշ . .

Ես ո՛վ, օրիորդ, կըսեմ քեզի. հապա  
թէ որ ատոնք չըլլան . . . . .

Իմ ըսելիքս այդ չէ. ուրիշէ երջան-  
կութիւնն որ տեղ ըլլալը միտուելնիս .  
ուրիշէ Հայ դիւղացւոց քաշած տառա-  
պանքը :

Հիմա տեսա՛ր որ ստակին զօրու-  
թիւնը ոչինչ է . երիտասարդ մը որ քեզ  
կըսիրէ, որ քեզի համար Գրողէն անդամ  
չվախնար, երիտասարդ մը կ'ըսեմ որ իջ  
անձը այսչափ ծայրայեղ վտանգներու կ'են-  
թարկէ կրնայ նա՛ ալ մեծ մարդ մ'ըլլալ .  
գու քու ժողտովդ այնպիսի զօրութիւն մը  
կրնայիր տալ անոր՝ որ չեմ կրնար բերնով  
հասկըցնել առանց սիրոյ՝ հարուստի մը  
հետ կարդուիլ ուզելը անոր ոսկիներուն  
հետ պօսակուիլ, և անշունչ ու չնչին մե-  
տաղ մը առնել ըսել է, ինչպէս քու աղք  
դակից երիտասարդներդ սիրոյ և մարդ

կային պարկեշտ օրինաց երեսը թքներով,  
աղջիկէն առաջ անոր քսակը կը հարցունեն,  
մոլի՛ ամուսնութիւն, որոյ նման բանի մը  
քեզ արժանի չեմ տեսներ :

— Կը հաւանիմ խօսքերուդ , Մեծդ  
Շուտիկ, ըսաւ Շուշան ծունկ չոքելով ,

— Կը հաւանի՞ս :

— Այո, բայց ո՞ւր է Գնել :

— Ուրեմն, իմ բարի աղջիկս, եթէ կը  
հաւանիս քու սիրականդ սիրելու և զայն  
առնելու՝ անիկա հիմայ Արտաւազդայ  
եղբորորդին եղած այս պալատին մէջ կը  
գտնուի. դարձեալ կըսեմ, օրի՛որդ, եթէ  
էք բառին նշանակութիւնը կը հասկընաս,  
չդրժե՞ս Գնելի սէրը. եթէ ոչ, գիտե՞ս,  
Երկնից պատիժներն քու գլխէդ չպիտի  
պակսին :

Շուշան կարմրելով պատասխանեց :  
Ի՞նչ ըսիք, այս պալատին մէջ է Գնել . .


Ա՛հ, — Գրողին բերանն երթաս ,  
Թշուառական տղայ, մինչև հո՞ս ալ եկար :

Ես ալ տեսներով որ Շուշան աւելի  
ստիպմամբ քան թէ համոզմամբ խոստացաւ  
սիրել զիս, և երբ պալատին մէջ ըլլալս լսեց



աղաղակաւ և հատակտոր խօսքերով  
յայտնեց թէ իւր սիրտն ու բերան իրարու  
անհամաձայն էին :

Մէկէն իմէկ ոտքի ելայ, և պատու-  
հանին վանդակներն վեր առնելով, դլուխս  
դուրս հանեցի և բարձր ձայնիւ գոչեցի .  
«քեզի համար մա՛հ տալ կուղեմ ինձ ո՛  
Շուշան, ո՛ սիրեցեալդ օրիորդ, դժա՛  
խմ թշուառ վիճակիս : »





## ՍԵՒԵՐԵՍ ՀԱՐՄՆՈՒԿԸ



Շուտիկ՝ իր պալատին մէջ եղած ատեննիս՝ այսպէս կը նկարագրէր սևերես հարսնուկը :

Սևերես հարսնուկն, սպասուհի Ս. րտաւագդայ, տասնևհինգ տարեկան կոյսի մը դէմքն ունի, թէև ինք տարեօք պառաւ մ'է. խօսած ատեն երեսներն արդէ ըստւած բոյսին գոյնը կ'զգենու, և գլուխն ալ հսկարտութենէն միշտ կը շարժի, դատան, և բազում մոլութեանց տէր մէկն է. անսանձ լեզու մը, և անդուռն բերան մ' ունի, այլ սիրահարաց բարեկամ, և անոնց շատ մը պէտքերը հողացող դժասիրտ բնաւորութիւն մ' ունի. եթէ իր հետ խօսիս՝ ինչ տեսակ ծաղիկ ըլլալը աւելի աղէկ կը հասկընաս :

Ս. յն ատեն ես չէի դիտեր որ այս յաւերժահարսին հետ ալ տեսնուելու

քաղիք կամ անբաղդութիւնը պիտի ունենամ, բայց Արարատայ վիհերուն մէջ ինկող մէկը (աղատութենէ զատ) ամէն բան յուսալու է :

Ես նստած սենեակէս բարձր ձայնով աղաղակելուս պէս, յաւերժահարսունք տներևութացան, և իմ բարեկամս ալ հոսելին դարձեալ ձեռքն առած կամաց կամաց սկսաւ քալել դէպ ի սալորենի ձառերն, և բաւական երթալէն յետոյ ամալ աչքիս չերևաց. իսկ ես վերատին դլուխս պատուհանէն ներս քաշելով դարձեալ ինկայ անկողնոյս վրայ, և սկսայ լալ :

Արտասուքս շատ պիտի հոսէի եթէ Սևերես հարսնուկը ներս մտնելով զիս չ'ստիպեր իր հետ խօսակցութեան բռնրւելու :

— Արքայորդի, ըսաւ, ինչո՞ւ պարապ տեղը կը լաս, և միշտ տխուր գէմք մը կը ցուցնես :

— Ո՛կոյս, ո՛ր գեղեցկութեան հրաշակերտ, գիտե՞ս սիրելն ի՛նչ է. ա՛հ ո՞ւր գնաց Դուշան, իմ աղնիւ սիրուհիս . . .

— Արտասու՛ք որ պարապ տեղը կը հոսին :

— Ես ալ գիտեմ այնպէս ըլլալը, ո՛վ սեահեր գիցուհի, անոր համար է որ զերջապէս իմ որոշմանս հաւատարիմ մնալու պիտի ստիպիմ . . . . . :

— Եւ դու զքեզ պիտի սպանե՞ս . . . . .

— Այո՛ :

— Անիո՛րձ երիտասարդ, քու վրայ դըթալ միայն կրնամ. և կըստսկամ այնպիսի բանէ մը որ քու որոշումդ է :

— Այսպէս դառն ու թշուառ կեանքի աւելի երջանիկ է մահը . . . . . :

— Յուսա՛, ո՛վ երիտասարդ. յոյսը քու ապաւենդ թող ըլլայ և քաջութիւնը քու ընկերդ. կը կարծե՞ս թէ այն օրիորդը որ քեզ տեսնել անգամ չուզեր իր բաղձանացը պիտի հասնի, կը կարծե՞ս որ երջանիկ պիտի ըլլայ, անոր ալ բաժինը հարկաւ մահ կամ թշուառութիւն է . . .

— Կը հաւատամ խօսքերուդ, բարեկամդ սիրահարաց. բայց ինձի չըլլալէն յետոյ, կուզէ թաղուհի ըլլա՛յ, ինչ կուզէ ըլլայ. միթէ ես զայն կատե՞մ :

— Այդ խօսքերդ բարի սրտէ բղխած հառաչանքներ են միայն :



— Եւ իմ ցաւերս աւելցունելու խօսքերի .

— Մոռցի՛ր Շուշանդ, և մխիթարէ դու զքեզ . այն ատեն փառաւոր ապագայ մը պիտի ունենաս, պարոն Գնե՛լ :

— Մոռնա՛լ, ո՛չ ո՛չ, անհնարէ, օրիո՛րդ, քանի որ անոր կենդանագիրը սրտիս և հոգւոյս վրայ կը մնայ, այն կենդանագիրն որ մինչև գերեզմանիս դուռը իմ հետս պիտի գայ, մոռնա՛լ, ոչ երբէք, քանի որ հօրեղբայրս և Մասեաց գնդին զօրապետներն խոստացան իմ սիրուհիս ինձի դարձունելու աշխատիլ :

— Քու հօրեղբայրդ (բո՛ւհ), կը կարծե՞ս որ ես ալ խաբուիմ, ըսաւ կոյսը և իր բերանը սպիտակ թաշկինակով մը դոցեց իր խնդալը չտեսնուելու համար :

— Ինչո՞ւ կը խնդաս, օրիո՛րդ :

— Ինչպէ՞ս չխնդամ, քանի որ ծաղրելի կատակերգութեան մը դերասանն եղած ես, 1727 տարի ետքը, Սրչակունեան թագաւո՛ր . . . և Տիրան Սրտաւազդայ յաջորդին որդին Գնե՛լ . . . . .

— Գնե՛լ, միայն Սրտաւազդը կրնաս խաբել, ուրիշներն ամենն ալ քեզ կը



ճանչեն, և քու վրադ կը ծիծաղին՝ երբ  
զանոնք ալ խաբելու կ'աշխատիս. չարաճճի  
դիչերաշրջիկ ոգին, մեզ ամենքնիս ալ  
այս տեղ բերած ատեն մեզ ալ պատուի-  
րած է որ Արտաւազդը թմրութենէն  
չարթնցունենք :

— Ըսել է որ ամէն բան դիտէք դուք :

— Այդ շատ միամտական խօսք է, Ար-  
տաւազդէն զատ ամենն ալ օրը քառասուն  
անգամ լոյս աշխարհ կեննեն կը մտնեն,  
անոնք խաբել համոզել կըլլա՞յ, Պնել :

— Ուրեմն, օրիորդ, կաղաչեմ քիչ մը  
քովս նստէ խօսինք :

— Բայց հոս գալուս պատճառը դիտե՞ս :

— Ոչ :

— Արտաւազդ քեզ տեսնել կուզէ,  
չուտ ոտքի ել, ինչու որ ուշացանք :

— Չէ չէ, չենք ուշացած, քիչ մը նստէ,  
մե՛զք որ հայրենակից ենք :

— Այո, հրամանքդ ո՞ր տեղացի ես,  
ըսաւ, քովիս բարձին վրայ նստելով :

Որովհետեւ ես կոյսին ո՛ր երկրացի  
ըլլալուն վրայ տեղեկութիւն չունէի, և  
կուզէի ալ որ անոր հայրենակից ցուցնեմ

ինք զինքս, անոր համար — դ՞ու որ ան-  
զացի ես հարցուցի անոր :

— Ես, ըսաւ, Եռայլութեանց քաղա-  
քէն եմ :

— Եռայլութեանց քաղաքէ՛ն :

— Այո :

— Ահ, իմ աննման հայրենակիցս, ես  
ալ նոյն քաղաքէն եմ. ուրեմն ձեռքդ տուր  
ինձի, ձե՛ռքդ, ձե՛ռքդ ըսելով ոտքի ելայ,  
և գացի խեղճ կուսին թևէն բռնելով  
ամուր մը քաշեցի, և թոթուեցի, այնպէս  
ամուր որ եթէ խեղճին թևը տեղէն չելաւ՝  
չատ բաղդաւոր մէկն էր :

— Քաղաքավարութիւն կուզես նէ ա-  
սանկ թող ըլլայ ըսաւ Սևերես խնդալով,  
բայց իմ հոգս չէին անոր խօսքերը և խըն-  
դալը. որովհետեւ ինձի հայրենակից ը-  
լալէն յետոյ անոր հետ կրնայի շատ խըն-  
դիրներու վրայ ալ խօսիլ և անոր գաղա-  
նիք տալ. մանաւանդ անկէ շատ ալ բան  
սովրիլ. նա ուղածին չափ թող խնդայ և  
հեզնէ զիս. որ մ'ալ հարկաւ ես կը փո-  
խարինեմ՝ կըսէի :

Միսակ չեմ գիտեր թէ, դու իմ ան-

ըլլայիրնէ ինչ պիտի ընէիր :

— Բայց շատ ուշացանք, պարոն Քնել,  
եւ երթա՛նք :

— Երթանք ըսի ոտքի վրայ ելլելով,  
բայց քեզի բան մնալ պիտի հարցընեմ :

— Շատ աղէկ, բայց երկայն չընես :

— Ո՛չ, ըսելիքս սա է որ, Շուշան կը  
կարծէ՞ թէ իմ ձեռքէս, պիտի կրնայ ա-  
զատիլ :

— Ինծի նայէ, Քնել, Արարատայ մէջ  
ամենեւին բռնութիւն չըլլար. ազատու-  
թեան մազին անգամ դպչողին զանազան  
պատիժներ սահմանուած են :

— Եթէ ազատութիւնը ձեզի այդչափ  
սիրելի բան մ'է, ինչո՞ւ ուրեմն Արատ-  
ապղղայ ազատութիւն չէք տար :

— Ատիկայ զատ դիւանագիտական խըն-  
գիր մ'է, ատոր խելք հասցունել ուզելը  
տղայամտութիւն է, բայց ինչ և իցէ, լռե-  
անա քաջին սենեակը հատանք, չըլլայ որ  
Արտաւազդ այսպէս մտերմաբար իրարու  
հետ խօսելնիս տեսնէ, ըսաւ, և սենեակին  
դուռը բանալով ներս մտաւ, ես ալ  
ետեմն :



Արտաւազդ ոսկի աթուռի մը վրայ նստած ձեռքը մեծ գիրք մը կար, գիրք մը որ ինչպէս պատմութիւնը կ'աւանդէ, դբօսանաց համար կ'ընթեռնուր . ներս մտածիս պէս գացի հօրեղբօրս ծնկուըներն համբուրեցի, և — այդ ի՞նչ գիրք է որ կը կարդաս, իմ քաջ հօրեղբայրս, ըսի :

— Իմ պատուական Քնեւլ, ըսաւ, մեր Մարիբաս կատենային շինած Հայոց պատմութիւնն է, ես այս գիրքը շատ կը սիրեմ, և ոչ ալ կարդալէն կը կշտանամ, մանաւանդ թէ մեր նախնեաց ըրած քաջութիւնքն երբ կը յիշեմ անով՝ սիրտս սըխրանօք կը ընու, վասնզի Վահագն մը կը գտնուի որ Յունաց Հերակլէսը կը գերազանցէ, և Տորք մը որ Հեկտորն ու Աքիլլէսը . չեմ գիտեր թէ արդեօք հիմայ ալ ազգը նմանօրինակ դիւցազուններ ունի՞ :

— Ես կակազեցի, և մտքէս միայն գիներտան դիւցազուններն յիշեցի . . . . :

— Կընայիմ որ դարձեալ տրտում կ'երևիս, Քնեւլ, արդեօք հանգիստ չե՞ս :

— Ետտ հանգիստ եմ, իմ քաջ հօրեղբայրս, եթէ քիչ մ'ալ տրտում կ'երևիմ,



այն ալ աս տեղերուն օտար ըլլալուն հա-  
նար է :

— Գնե՛լ, քանիմ'օր միայն պիտի նեղ-  
ուիս, մէկ շաբաթէն կը սովորիս այս տե-  
ղերուն և կը հանգստանաս . բայց որչափ  
ալ սրտնեղութեան մէջ ինկած ալ ըլլաս,  
անհնար է որ այս գիշեր իմ խաղարանս  
չը տանիմ զքեզ, քանզի այս գիշերու աններ-  
կայացուելիքը ԳԵՂԵՑԻԿՆ ՍՐՄԵՆԵԱՅ  
ըսուած ողբերգութիւնն է : Այս քերթ-  
ուածը Մեծին Տիգրանայ որդւոյն Ար-  
տաւազդայ շինած բանաստեղծութիւն-  
ներէն մէկն է, որ իմ կնոջս Արմենեայի  
համար ալ կրնայ հասկըցուիլ :

— Բոլոր սրտով քու հրաւերդ կ'ըն-  
դունիմ, քաջդ Մասեաց, և շատ շնոր-  
հակալ եմ :

— Աւրեմն պատրաստուէ :

Եւ գրասեղանին վրայի զանգակը  
առնելով հնչեցուց, այս վերջին ազդարա-  
րութիւնն եղաւ . դուրսէն ձիերու խխըն-  
չելու ձայներ լսուեցան . քաջը ոտքի ելաւ  
և հրամայեց ինձ որ կանգնիմ . վասնզի

Ի՞նչ Սիւնեցիք\* անգամ պատրաստ ըլլալին յայտնեցին ըսաւ :

Ես ալ թէև Արտաւազդայ ԽԱՂԱՐԱՆ ԱՐՇԱԿՈՒՆԵԱՆ ըսուած Թատրոնը տեսած էի, բայց անոնց խաղերուն և պարերուն վրայ ամենևին տեղեկութիւն չունէի, անոր համար շատ կը բաղձայի քաջին հետ անգամ մը սա զուարճալի տեղը երթալ . մանաւանդ երբ կը յիշէի թէ Շուշան ալ հոն է և ներկայացման մեծ մասին ինքը դերասանուհի է. անկարելի է հասկըցունել քեզ, Սիասկ, որչափ ուժգին իղձով կը տոչորէի. արդէն քանի որ այս վիհերուն մէջ գացած էի և Շուշանա Շուտիկան հետ պարտիղին մէջ տեսած էի՝ կ'զգայի թէ մեղամաղձոտութիւնս աւելի սաստկացած, աւելի բորբոքած էր, և իմ ամեն օր թափած արտասուքս առանց սուտ խօսելու կրնամ ըսել թէ Աբասչիսի դօրաց խմելով չորջուցած վաակներուն չափ կը լլար :

---

\* Արտաւազդ իր ձեռքուն Սիւնեցի ըլլալն Շուտիկէն լսած էր :

Սիրոյ զգացումը կրողի մը համար այս աշխարհը շատ փշոտ է, և քանի որ սիրահարը իր տարփաւորին կը մերձենայ կամ մերձենալու յոյս մը կունենայ այնչափ աւելի կը տաքնայ, և այնչափ աւելի իւր փիճակը կը թշուառանայ: Եթէ Արտաւազդայ, Մելիգեղիկի, Շուտիկան ինծի տուած յոյսերն չըլլային, կը կարծէ՞ք որ հիմայ այս խնձորենիին տակը դիս պիտի տեսնէիք. ո՛չ, ո՛չ, թէ և հիմայ ալ բացակայ եմ այն մեծ քաղաքէն, և չունիմ լուր մը Շուշանէս, Սիսակ, այլ՝ զինքը մոռնալ և անունը յեղեղելէ դադարիլ անհնար է. դու երևակայէ՛ հիմայ թէ հոգիս որչափ կրնայ յուղիլ երբ նոյն Արտաւազդայ Խաղարանին մէջ զայն տեսնելու ամէն միջոց ունենամ: Արդեօք ո՛րպիսի ուրախութեամբ և ցնծութեամբ նետուեցայ քաջին կառքին մէջ, ուր նստեր էին Գուգուլ, Սևերես հարսնուկը, Մասեաց Քաջը և քանի մը յաւերժահարսունք:

Շուտիկը որ կառավարնիս էր Սիւնեցի ձիերն մտրակեց, և կառքը փոթորիկի արագութեամբ սկսաւ ճռնչելով ընթանալ:



Այն ատեն արքայն սկսաւ խօսիլ, այլ եւս  
անոր խօսքերուն ամեննէն միտ չէի դներ.  
Խելքս միտքս Շուշանիս վրայ էր, բայց  
յետոյ ես զիս տրտում չցուցներու համար  
սկսայ պարտիզին վրայ նայիլ: Արդարեւ  
պարտէզն ալ շատ գեղեցիկ էր ինչպէս որ  
քիչ մը յառաջ նկարագրեցի. քովս նստող  
Սևերես հարսնուկն ալ իմ պարտիզին վրայ  
նայիլս նշմարելով. — Անրձեմ ըսաւ մեր  
պարտիզին գեղեցկութիւնը քու ուշդ  
դրաւեց, այնպէս չէ՞ :

— Այո՛, լուսեղէն օրիորդ, պարտիզին  
գեղեցկութենէ զատ այս տեղերուն շէն-  
քերն ալ շատ գեղեցիկ և հոյակապ կը  
տեսնեմ. գիտեմ որ եթէ Սնին շինող  
Տրդատ ճարտարապետն ալ նորէն աշխարհ  
դայ այսպէս գեղեցիկ չկրնար շինել :

— Ապա թէ որ քաջաց ապարանքն եր-  
թա՛ս, դրեթէ ասոնց հակառակն ալ հոն  
տեսներու պիտի ստիպուիս :

— Քանի որ հօրեղբայրս ողջ է եւ այն  
տեղը տեսներէք շունիմ :

Իմ խօսքս կտրելէս յետոյ յաւերժա-  
հարսը երեսը քաջին կողմը դարձուց և



ալ ձայն չտուաւ : Ես ալ վիզս ծռելով  
և գլուխս կախելով դարձեալ խոր մտած-  
մանց մէջ ընկղմեցայ, կարծեմ Արտաւազդ  
գթալով իմ վիճակիս վրայ, հրամայեց  
Պուղուլին որ Հայկական ամենաքաղցր  
եղանակաւ երգ մը երգէ . արդէն քաջին  
մէն մի հրամանը փութով կը կատարուէր .  
Պուղուլ սակեղօժեալ եռաթել քնար  
մ'առնելով, սկսաւ երգել և զարնել մէկ  
ամենաքաղցր երգ մը՝ որուն Պողթան  
ըսուած երգերուն տեսակէն ըլլալը Սեւ-  
երես հարսնուկն ինծի հասկըցուց :

Սիսակ, ես այս Պուղուլին երեսն ա-  
մենեկն նայիլ չուզեցի իր ձայնին գեղեց-  
կութեանն հետ ունէր նաև դուրս ցցուած  
աչքեր , և սիրտով\* շարեալ երեսներ .  
իր նիհար և թռքացաւ ունեցողներու յատ-  
կացեալ դէմքը՝ գերեզմաններէ փախչած  
մեռելոց դէմքերէն չէի կրնար տարբերել,  
թէև մասեաց քաջը միւս ամէն յաւեր-

---

\* Սիրտ ( քիւլերմէնի ) տեսակ մը կարմիր հող է ,  
որ տեսանք Հայաստանի շատ նահանգներու մէջ  
1864 ին, ճամբորդած ատեննիս :

Ժահարսներէ վեր կը դասէր զայն :

Ասոնք ըսելէն յետոյ, կը խոստովանիմ որ ընտիր երգիչ մ'էր, եթէ դու ալ տեսնէիր որ իր մատուրները կը զարներ քնարին թեւերուն, ինէ աւելի պիտի սքանչանայիր անոր վրայ . Ապօղոսն իր չնորհքները ձրի բաշխած էր այս նոր Հերային . մասեաց բոլոր սարերուն արձագանքը վկայ է խօսքերուն :

Ինչպէս ըսինք մեր կառքը շատ արագ կը քայէր, այնպէս որ ոչ թրամվէյներն և ոչ երկաթուղեաց վակոններն կրնային անոր արագութեանն հասնիլ . Գուդուլ ալ իր անհիւս մազերն ձգած էր ուսերուն վրայ և այնպէս կը զարներ իր քնարը, երբ աչքերս այն կողմ ուղղեցի, ա՛հ ի՞նչ կը տեսնես, Մասեաց վիհերուն զեփիւռը անուշ անուշ կը փչէր, և Գուդուլին մազերն ալ ազատ ազգի մը դրօշակալին վրայ փայլող դրօշին պէս գլխուն վրայ կը ծածանէին դէպ' իրեն նայեցայ և սկսայ հեկեկալ :

— Ինչո՞ւ այդչափ կը լաս, անբաղդ երիտասարդ, ըսաւ Սեւրես հարսնուկը .

միթէ իմ խրատներս ազգեցութիւն մը  
չըրի՞ն վրադ :

— Աուլամ և պիտի լամ յաւիտեան ,  
ո՛վ սիրուհիս , դու որ ստուերի մը պէս  
տռչեէս կը վախչիս , վերջապէս զիս գե-  
րեզման իջուցներու պատճա՞ռ պիտի ըլլաս ,  
ա՛հ գոնէ ժպիտ մը , արտասուների կաթիլ  
մը ինձի չե՞ս պարզ և եր :

— Ժպիտ և արտասուք , քարասրտի մը  
համար . . . . .

— Այո , ո՛վ Սեբրես հարսնուկ , անոր  
կարծր սիրտը նշմարած եմ , դիտեմ որ  
օր մը զիս պիտի կորուսնէք , օր մը Քնելի  
դագաղը ակներև պիտի տեսնէք , երջանիկ  
պիտի համարիմ ինքզինքս՝ որ գերեզմա-  
նաքարիս վրայ ծաղիկ սիւռելու եկած ա-  
տեննիդ հանգի՛ր խաղաղութեամբ , ո՛վ  
Քնել , ըսէք , քու սիրուհիդ որ օտարին  
ձեռք տուաւ , երկնից արդար պատիժ-  
ներէն . . . . լքեալ չարաչար կորաւ :

Այսպէս էին մեր խօսակցութիւնները  
որ գրեթէ կէս ժամու չափ տևեցին և շատ  
ալ պիտի երկարէին , եթէ կառքերնիս յանջ



կարծ խաղարանին դրան առջև չկայներ :  
 Խաղարանին դրան առջև խուռն  
 բազմութիւն մը կայներ էր, և անհամբեր  
 մեղ կ'սպասէր, Մասեաց քաջը յաւեր-  
 ժահարսանց օգնութեամբը կառքէն վար  
 իջաւ և կեցցէներու ձայներով դէպ ի ներս  
 սկսաւ երթալ, ես ալ իմ հօրեղբօրս պէս  
 օգնականի կարօտ չըլլալով, արդի կրթեալ  
 երիտասարդաց պէս կառքին վրայէն մինչև  
 վարը կամացուկ մը ցատկեցի. այնպէս որ  
 ոն կեցող ոգիներն քահ քահ մ'է փըր-  
 ցուցին, իմ վրաս չինդացուներլու համար  
 միւս եղածներն ալ չեմ զրուցեր :

Հօրեղբայրս ներս մտաւ ես ալ յա-  
 ւերժահարսանց հետ անոր ետևէն դացի .  
 անիկայ թէև դանդաղ կը քալէր, ես շուտ  
 մը անոր առջէն անցներով դացի մէկ գե-  
 ղեցիկ և փառաւոր օթեակի մը մէջ նըս-  
 տեցայ առանց ձայն հանելու :





## Մ Բ Ա Ր Ո Ւ Հ Ի Ն



ԽՍՂՍՐՍ.Ն Ս.ՐՇՍ.ԿՈՒՆԵՍ.Ն ըս-  
 տւածը շատ գեղեցիկ և ամենափառաւոր  
 թատրոնն մ'էր. այն տեղ նոր դացող մէկը  
 անոր շքեղութեանը վրայ պիտի զարմանար.  
 Սիսակ, առանց իմ այս խնձորենիին տակ  
 նստելս յիշելու, կրնաք երևակայել թէ  
 ես ալ ձե՛ծ քաղաքներու թատրոններ տե-  
 ւած եմ, այլ առանց չափազանցելու կրնամ  
 ըսել թէ անոնց և ոչ մէկը Ս.րտաւազդայ  
 խաղարանին գեղեցկութիւնն ունի. չորս  
 կարգ իրարու վրայ շինուած օթեակներէն  
 զատ, մէջ տեղը հարիւրաւոր ոսկեզօծեալ  
 աթոռներ կարգաւ շարուած էին, չքսնք  
 այն ամէն զարդարանքներն որ շուայլաբար  
 ցանուած էին ամէն տեղ. չքսնքնաւ այն  
 ամէն դաբնիներն, և ազգի ազգի ծաղիկ-  
 ներն որ թատերաբեմին բոլորտիքը հիւս-  
 տւած էին :

Ես այս ծաղկէ պարտիզին օթեակներուն մէկուն մէջ նստելէս յետոյ զարմանքով կը դիտէի այն ամէն բաներն՝ որ միշտ տեղի կունենային. Արտաւազդայ քաջերն կարգ կարգ սկսան նստիլ իրենց տեղերն, և քաջը իմ նստած օթեակէս քիչ մը հեռի Գուգուլին և Սևահերին հետ մէկ տեղ աթոռի մը վրայ բազմած էր :

Մեր երթալէն յետոյ հաղիւ թէ քառորդի մը չափ ժամանակ անցած էր, երեք տարեկան տղայի կերպարանքով քաջիկ մը փոքրիկ փող մը առած թատերաբեմին վրայ ելաւ :

Ես ակնապիշ սկսայ անոր նայիլ այն ալ իր փողով քանի մը անգամ ոտլեց և վարագոյրին տակ մտնելով աներևութացաւ . քիչ մը ետքը նուագածուաց խումբը սկսաւ քաղցրածայն երգել այնպիսի դողտը երգեր որ կենացս մէջ ոչ երբէք լսած եմ :

Կարծեմ անոր համար էր որ նուագահարաց գլխաւորն, իր ձեռքի մոլովը յուշարարին գլխուն վրայի տուփին քանի մը անգամ զարնելուն համար շատ բար-

կացայ, որովհետև անոր ատանկ ընեւն վարագոյրին բացուելուն արշալոյսն է կը սէին, իրաւ ալ անոնց բսածին պէս է եղեր, վասնզի այն հաղիւ թէ իք հարուածներն երեքի հասուցեր էր որ նուազ ահարք ձայներնին կտրեցին, և հանդիսականք սկսան իրենց օտքերով դուրսէլ վարագոյրին բացուիլը փութացներու համար. այս քիչ անքաղաքավարութիւն չէր ոքոյ մասնակից էին առանց բացառութեան Մասեաց բուլը այն քաջերն ոք այս հանդիսիս ներկայ կը դռնուէին :

Հագիւ թէ այս խօսքերը քեզի ըսելու չափ ժամանակ անցած էր՝ վարագոյրը շառաչիւնով բացուեցաւ : Բարէ՛ Ս. վարագոյրը բացուելէն յետոյ, Ջուարթնոց նման սպիտակազգեստ չնաշխարհիկ օրիորդ մը ոսկեզօծեալ քնարն ի ձեռին թատերաբեմին վրայ երևաց, և ա՛հ, զօրավարք Ս. բտաւազդայ, Մասեաց քաջեր ըսաւ, մատովն ալ դէպի ներսի կողմը քանի մ'այլանդակ անդրիններ ցցնելով, ահա ԱՐՄԵՆԵԱՅԻ համար արիւն թափող կտրիճներն, տեսէ՛ք անոնց խեղճուկ



դէմքը մարդս կը փղձկեցընէ, և դարերով  
զգայուն սրտերու վրայ վէրքեր կը պահէ .  
քաջեր, այս ազատորդիք որոնց արձան-  
ներն այժմ ակներև կը տեսնէք, մեր  
վեհափառ Ս. րտաւագդ արքային, Մասեաց  
քաջերու զօրավարին Ս. րմենեայ կնոջը  
համար, Երուանդաշատի դաշտերուն վրայ  
մարտիրոսացան :

Ս. յսպէս, ըսաւ արարուհին, և աթոռի  
մը վրայ նստելով սկսաւ եղանակել այն-  
պիսի հեշտալի երգ մը, որուն նման քաղց-  
րութիւնն ոչ Գուգուլը և ոչ նուագածուաց  
խումբը կրնային տալ, Սիսակ եթէ գու-  
իմ տեղս ըլլայիր պիտի ըսէիր թէ, Եւ-  
տիրպէն նորէն աշխարհք եկած է, և երբ  
անոր շնորհալի շարժուածքներն տեսնէիր  
Տէրփսիքորը միտքդ պիտի իյնար :

Ս. յս Գուսանը, այս չնաշխարհիկ գե-  
ղեցկութեան տիպարը ինձ անձանօթ չէր  
երևէր . անոր ձայնը շատ նմանութիւն  
ունէր Շուշանիս ձայնին. այո՛ նոյն քալ-  
ուածքը նոյն փայլակէ աչերն, ո՛հ նոյն  
հասակը և նոյն դէմքն էին. իրա՞ւ կը  
տեսնեմ արդեօք, այո՛, իրա՞ւ . . . իրա՞ւ



է . . . . ո՞ւր էր թէ սուտ ըլլար . . .  
Աստուած իմ Շուշանս է անիկայ . . .  
ահա՛ Շուտիկան վկայութիւնը, ահա՛ Ար-  
տաւազդայ խաղարանին Գուսանը, ահա՛  
. . . . . ահա :

Խեղճ տղայ, մինչև ե՞րբ չարչարուիս  
քարասրտէ մը . . . . ըսի, և իմ նստած  
աթոռիս վրայէն վար գլտորելով շնչասպառ  
տախտակներուն վրայ փռուեցայ. իմ տա-  
կաւ առ տակաւ ելած ձայնէս ուրիշ բան  
չէր լսուեր եթէ ոչ այս խօսքը. եկ առ իս,  
իմ սիրելի Շուշանս, եկ, իմ նազելի իմ  
պաշտելի սիրուհիս . . . իմ այս խռովիլս  
տեսնելով, թատրին մէջի բոլոր քաջերն  
իրար խռեցան, և հօրեղբայրս ալ այլա-  
գունեալ իր տեղէն ելաւ վազելով քովս  
եկաւ. շատ քաջեր կարծելով թէ թատ-  
րոնը կը փլչի ելան, փախան, արարուհին  
ալ վարագոյրներուն տակ մտնելով չեմ  
գիտեր ինչ եղաւ, իսկ ես ինչպէս որ  
փռուած էի դեմնին վրայ, այնպէս մնացի.  
անկէ անդին մարդ մը կրնայ երևակայել  
թէ ի՛նչ բաներ տեղի կունենան :

Ասկէ քանի մը օր ետքը Սևահեր

հարսնուկը կրսէր թէ քու փռուած կեց  
 ատենդ Վնել՝ Արտաւազդայ քով պս  
 րաստի գտնուած՝ կարմիր հեղուկ մը ք  
 խմցունելով առողջացուցինք դքեղ . ես  
 անոնց ինչ ընելը չեմ գիտեր , միայն սա  
 միտքս կրգայ որ սոսկմունքով արթնցած  
 ժամանակս տեսայ որ իմ սիրելի հօրեղ  
 բայրս գլուխս ծնկուրներուն վրայ առաւ  
 և խանդաղատելի աչօք առ իս կընայէր .  
 տեսնելով որ ես ալ սկսայ շարժիլ և իմ  
 մայրս օգնութեան կանչել , Քիչ մը վարդ  
 աջուր սրսկեց վրաս , եղբօրորդիս՝ իմ սի  
 րուն Վնելս , դեռ անփորձ երիտասարդ  
 մեսե եղեր , ըսաւ . ձեերէ և շարժուածք  
 ներէ խաբուելով , սիրահարիլ այնպիսի օ  
 ըրիորդի մը , որ իր համարումը եթէ չէ կո  
 րուած , խախտած է՝ շատ թշուառ բան  
 քեղ համար , իմս Վնել . քու մայրդ քեզի  
 կանոնաւոր կրթութիւն չէ կրցեր տալ .  
 սակայն քանի որ հիմա իմ քովս ես , ան  
 տարակոյս զգօն մարդ մը կ'ըլլաս , նայէ  
 անդամ մը իմ ծերացեալ դէմքիս ես ալ  
 աշխարհիս վրայ մոլութիւն չ'մնաց որուն  
 չգերեցայ . բայց ի՞նչ շահեցայ , ոչինչ .

Սրտաւաղդայ վրայ ակնարկ մը ար-  
եցի, և անոր խօսքերն լսելու համար  
լական ատեն լուռ կենալէն յետոյ  
սղծակի դէմքով մը դայի անոր վիզը պը-  
լըւեցայ, և իմ քաջ հօրեղբայրս . ըսի,  
աշխարհիս վրայ քենէ զատ աղգական  
չունիմ, ինձ այնպէս կերելի թէ ամէն  
կողմ աւերակ է, ամէն տեղ թշուառու  
թեամբ լի, և մարդիկ ամենն ալ դարչելի  
ն. այժմ չունիմ (վիճերուն մէջ) մայր մը  
զրցաւերս անոր յայտնեմ, չունիմ կատա-  
ւեալ բարեկամ մը որուն սիրտս բանամ.  
Թափառական կերթամ աշխարհիս վրայ.  
մարդ մը շնչաւոր մը զիս իրեն չկանչեր,  
տեսայ շատ երիտասարդներ որ իրենց  
սրտին սիրականներն առած դաշտերու  
վրայ ճեմելու կ'ենէին. մարդ մը, կոյս մը  
ակնարկ մը չնետեց իմ վրայ. իմ քսան-  
ամեայ հասակիս մէջ սիրեցի օրիորդ մը,  
աւա՛ղ այն ալ զիս ուրացաւ, ուրացաւ  
և մինչև անգամ զիս չճանչեր. այլ այն  
չնորհակի արարածը իմ սրտիս վրայ այն-  
պիսի սէր մը քանդակած է, որ մինչև գե-  
րեզմանիս դուռը չպիտի անհետանայ:



Ս, յո, արի հօրեղբայրս, իմ սիրուհիս Ա, ո՞ր  
 փորի եղերքէն կորուսի. իբրև թռչուն մը  
 որ մանուկին ձեռքէն կը թռչի. զայն գըրտ-  
 նելու համար շատ տեղեր աստանդեցայ,  
 ծառայեցի բոլոր անոնց որ սիրուհւոյս  
 վրայ կը խօսէին, և հիմայ ալ քաջ մ'եմ  
 Մասեաց վիհերուն մէջ: փառք Ոսկեմօրն.  
 այս տեղ տեսայ զայն և ճանչցայ. Եռ-  
 շանս է անիկայ որ քու վոսփորեան դես-  
 պանդ յափշտակած է. արի արքայ, ինձի  
 տուր զայն, եթէ կը սիրես Պնելդ. թէ ոչ  
 դիտե՞ս խենդենալով պիտի թափառիմ  
 աշխարհիս վրայ, և սանդարամետական  
 արհաւիրքներ զիս լեռնէ լեռ պիտի ձգեն.  
 ա՛հ բաղդն ալ, անողորք բաղդն ալ նոյն  
 ատեն իր դերը պիտի կատարէ. այո՛, զիս  
 պիտի հալածէ և ուր որ կարողանայ հաս-  
 նիլ ինձի՝ հոգիս ու մարմինս պիտի ջլատէ,  
 դարձեալ կրսեմ, իմ քաջ հօրեղբայրս,  
 չոր մարմինէ մը և մերթ ընդ մերթ տըռ-  
 փացող հոգիէ մը զատ բան չպիտի մնայ  
 վրաս. և վերջապէս իմ Խտացեալ մար-  
 մինս ի հող պիտի իջնէ. արդ արքայդ  
 քաջ, ձայնս որչափ որ կելնէ, կը գոչեմ



կ'աղաղակեմ գթութիւնն . . . . .  
խօսք մը բառ մը կուղեմ Ս. Բիդ վեհախառն:

Ս. Բաաւաղդ իմ աղաչաւոր խօսքերուս ուշադրութեամբ մտիկ ընելէն յետոյ տեսնելով որ ձայնս կտրեցի, իր նստած տեղէն ելնելով, եկաւ դարձեալ զիս գրկեց, և, որդիդ Ս. Բշակունեաց, ըսաւ, գիտես թէ ես ո՞րչափ զքեզ կը սիրեմ, ինէ չէ թէ գուսան մը, այլ էթէ թագաւորութեանս կէսը ուղեւ հաճութեամբ կըրտամ, բայց զքեզ ինչո՞ւ համար այդչափ նուաստութեան մէջ ընկած կը տեսնեմ. ի՞նչ, միթէ՞ դու Ս. Բշակունի չես. ի՞նչպէս կուղես անանկ մէկը քեզի կնութեան առնել, որ Գուսան է, և որուն երեսներն օրը տասը անգամ, զանազան ներկերով, կը փոխուին. ինչպէս որ սիրան ալ իր տեսած ամէն մէկ երիտասարդի համար, կը փոխուի. զսպէ դու քեզ, Պնել, պաշտպանէ քու հայրենական պատիւդ, արքայազն մի Գուսանի հետ չամուսնանար:

Խեղճ արարած, ըսի մտքէս, դեռ ինքզինքն հին դարուց մէջ կը կարծէ. դեռ զիս իր եղբօրորդին կ'անուանէ. համոզ-


ուած էի որ եթէ իմ նոր դարու զաւակ  
ըլլալս գիտնաք. զիս կտոր կտոր ընելով  
քաջաց ասպարանքը կը շրկէր, անոր համար  
զայն հօրեղբայրս անուանելով, մտերմա-  
բար կը յայտնէի անոր այն ամէն բաները  
յորոց ինձի շահ մը կ'ակնկալէի :

Միսակ, եթէ դու իմ տեղս ըլլայիր,  
քաջին այս խելացի խօսքերէն օգուտ կը  
քաղէիր. բայց ես առանկ չեմ, իմ Շու-  
շանիս համար ամէն բան յանձն առած  
էի, այս սկզբան տէր ըլլալուս համար ալ  
զիս չես կրնար պախարակել. յիշէ այն  
մեծ խօսքը որ գիտուն մը ըսած է իր մէկ  
բարեկամին «սիրահարի մը մտաց և մարմնոյ  
աչերը միշտ դունաւոր ակնոցով մը պա-  
շարեալ է» :

Սիրուհի մը միշտ սիրուհի է՝ կուզէ  
Պուսան, կուզէ մուրացիկ, կուզէ ազնու-  
ական ըլլայ. հերիք է որ անիկա այն  
ձգողական զօրութիւնն ունենայ, ինչպէս  
իմ Շուշանս, իմ այս կարծիքս իրաւ է,  
վասնզի Սրտաւազդ որչափ խրատեց,  
որչափ չեխեց ամենեւին մտիկ չըրի. իմ  
սովորական խօսքս այս էր միայն. իմ քաջ






 Ս. յս վիպտասանութիւնը հինգ  
 հատորէ պիտի բաղկանայ, որո  
 Ս. Հատորն արդէն հրատարակ  
 ուած, և Բ. Հատորն ալ մամլոյ  
 տակ է, որ մօտ օրերս պիտի հրա  
 տարակուի:

Ամբողջ գործոյն դիմն է բաժա  
 նորդաց համար մէկարժաթ մէճիտ  
 Իւրաքանչիւր Հատորը մէկ քա  
 ռորդ արժաթ:

Բաժանորդաց լուծեան տեղերն  
 են Չաղմաղճըլար Եօզուշու Յա  
 ղութիւն Մարգարեանի 23 թիւ  
 Գրատունը. Մահմուտ-վաչայ պօ.  
 յաճի Մանուկ աղային 208 թի  
 խանութը. և բոլոր Հայ գրախ  
 ճառաց քով հասով կրժախուի:







11 347

2013

